Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

1-2(640-641)
28.01.2022
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԵՐԲ ԳԱԶԱՆՆ ԻՆՔՆ Է ԻԲՐԵՎ ՁՈՂ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ

1990-ի հունվարի կեսերին Ադրբեջանական ԽՍՀ մայրաքաղաքում տեղի ունեցած ոճրագործությունները, ինչպես դրանից շուրջ երկու տարի առաջ Սումգայիթում իրականացված հայկական ջարդերը, պատշաճ իրավական ու քաղաքական գնահատական այդպես էլ չստացան: Միութենական իշխանությունները ուշացումով միջամտեցին ցեղասպանական գործողություններին, իսկ միջազգային հանրությունը, երկաթե վարագույրներից դուրս գտնվելով, անհաղորդ մնաց տվյալ իրադարձություններին:

Չդատապարտված ոճրագործությունները սովորաբար կրկնվում են, ինչին մենք ականատես եղանք ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության հետագա ժամանակահատվածում: 2020-ի աշնանային պատերազմը ևս, որը մեծ աղետ բերեց Արցախին, նույն այս համատեքստում կարելի է դիտարկել: Չկա որևէ երաշխիք, որ Ադրբեջանը, Թուրքիայի հետ համագործակցելով, հետագայում չի նախաձեռնի հայակործան նոր ծրագրեր թե՛ Արցախում և թե՛ նույնիսկ Հայաստանի Հանրապետությունում: Ինչպես ասում են, գազանն ավելի վտանգավոր է դառնում, երբ նրա ատամն արյունոտ է, իսկ թուրքի ժանիքի արյունը 1915-ից հետո չի չորացել:

Անդրադառնալով 32 տարի առաջվա Բաքվի իրադարձություններին՝ հարկ է նշել, որ ոչ միայն չի դատապարտվել կես միլիոնից ավելի տեղաբնակ հայերի ջարդն ու բռնատեղահանումը, այլ նույնիսկ հակառակը՝ Ադրբեջանն ինքն է հանդես եկել զոհի կարգավիճակում: Նենգափոխելով իրադարձությունների բովանդակությունն ու հետևանքները՝ ազերիները հորինել են «սև հունվար» անվանյալ տեսությունը, ըստ որի խորհրդային զորքերը Ադրբեջանի մայրաքաղաքում պատժիչ գործողություններ են իրականացրել խաղաղ ազերիների նկատմամբ: Անտեսվել է փաստը, որ ուղիղ մեկ շաբաթ այդ «խաղաղ ցուցարարները» վայրագություններ էին կատարում ինտերնացիոնալ քաղաքում՝ թիրախում ունենալով հայ ազգաբնակչությանը: Ադրբեջանի պատկան մարմինները շատ վավերափաստեր ոչնչացրել են, որպեսզի կոծկեն իրենց ցեղասպանական գործողությունները, բայց եղած տվյալներն էլ բավական են դրանց անաչառ գնահատական տալու համար:

Արդյո՞ք անցած երեք տասնամյակում բավարար աշխատանք է կատարվել Բաքվի ոճրագործությունները միջազգային դատարաններում քննելու, դրանց քաղաքական հետևանքները գնահատելու ուղղությամբ: Դժվա՛ր թե: Այս առումով մենք անելիքներ ունեինք և ունենք: Աշխարհաքաղաքական նոր իրողությունների համապատկերին, թվում է, թեման նոր հեռանկար է ձեռք բերում, այդ թվում՝ Արցախի իրավական կարգավիճակի փնտրտուքներում:

Առերևույթ երկրորդական թվացող մի փաստ. տարիներ առաջ «սև հունվար»-ի մասին ալիևյան կլանի կողմից հովանավորվել է ադրբեջանցի ոչ այնքան հայտնի գրող Սեյրան Սախավաթի համանուն գիրքը, որը տիրաժավորվել ու բեմանականացվել է իրավամշակութային տարբեր ձևաչափերում, իսկ հեղինակը դրա դիմաց ստացել է մեկ միլիոն ԱՄՆ դոլար հոնորար: Մինչդեռ նախկին բաքվաբնակ, հայտնի գրող Լևոն Ադյանի «Հեռացող եզերք» վեպը նույն այդ իրադարձությունների մասին՝ երկար տարիներ ձեռագիր վիճակում մնալուց հետո մի կերպ Ստեփանակերտում (Արցախի գրողների միության նախաձեռնությամբ) հրատարակվել է ու ...համարյա մոռացության մատնվել:

Լրջորեն խորհելու բաներ իսկապես կան:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Սեղմի՛ր ատամդ, դու ամենքի մոտ
Բացեիբաց լալու իրավունք չունես
Թեկուզ վիրավոր, թեկուզ արնաքամ,
Ձենքերդ տալու իրավունք չունես:

Դո՛ւ հայ բանաստեղծ, ինչ էլ որ լինի,
Վերջին զինվորդ էլ ընկնի հուսահատ
Քո ժողովրդի հավերժությանը
Չհավատալու իրավունք չունես:

Սիլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԳՐԱՎԻՉ

Հունվարի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ հանդիպում ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի հետ: Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, փոխնախագահ Հրանտ Մաթևոսյանը, ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը, ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռադիկ Կոստանյանը, ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լենսեր Աղալովյանը, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, ԳԱԱ գիտահետազոտական կազմակերպությունների տնօրենները և առաջատար մասնագետները:

ԱՀ ԿԳՄՍ նախարարի հետ հանդիպմանը մասնակցեցին Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Անյուտա Սարգսյանը և ԱՀ նախագահի խորհրդական Ազատուհի Սիմոնյանը:

Երևանյան այցի մանրամասների շուրջ զրուցեցինք Լ. Ղարախանյանի հետ:

Նրա խոսքով, հանդիպման հրավերը ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի կողմից էր, որը պատերազմից հետո երկու անգամ այցելել է Արցախ և այստեղ գիտությունը խթանելու նպատակով կոնկրետ քայլեր է նախաձեռնում: Լ. Ղարախանյանին անչափ ոգևորել են Ա. Սաղյանի՝ Արցախի գիտական կենտրոնը ԳԱԱ-ի փոքր մոդել դարձնելու գաղափարն իրականություն դարձնելու ուղղությամբ կատարվող աշխատանքները: Հանդիպման ժամանակ քննարկվել են ՀՀ ԳԱԱ-ի և Արցախի գիտական ու կրթական կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնման ու զարգացման հեռանկարները: Արցախի գիտական կենտրոնի հետ համագործակցություն սկսած ԳԱԱ ինստիտուտների տնօրենները հստակեցրել են իրենց աջակցության ծրագրերն Արցախում: Մասնավորապես առաջարկվել է իրականացնել հետազոտություններ ջրի որակի, գյուղատնտեսական մթերքների, տարածքների աղտոտվածության վերաբերյալ, ներդնել և ընդլայնել կենսատեխնոլոգիաները կենսապարոդուկտների ստացման նպատակով: Մոտ օրերս կբացվի «Նարինե պլյուս» կաթնաթթվային արտադրանքի արտադրամասը՝ Արցախի գիտական կենտրոնի՝ ԳԱԱ կենսատեխնոլոգիայի ինստիտուտի աջակցությամբ գիտական արդյունքի ապրանքայնացման առաջին հաջողված փորձի իրականացումը:

Լ. Ղարախանյանը կարևորել է մեր ազգային ինտելեկտի ներդրման, ինքնակազմակերպման, կենտրոնացման հարցը, Արցախի հայկականության պահպանման խնդիրը գիտական մակարդակով լուծելը, Արցախը գիտակրթական գրավիչ կլաստեր դարձնելը:

Հանդիպմանն առաջարկվել են Արցախի երիտասարդ գիտնականների փորձուսուցումը կազմակերպել ԳԱԱ-ում, Արցախում՝ դասախոսություններ ՀՀ առաջատար մասնագետների կողմից, ինչպես նաև՝ արտագնա նստաշրջաններ և գիտաժողովներ:

Նախատեսվում է երկու խոշոր գիտաժողով. մայիսին լինելու է «Աղվանից եկեղեցու էքնիկ պատկանելության հիմնախնդիրները» խորագրով, որը կկազմակերպվի ԳԱԱ արևելագիտության և պատմության ինստիտուտների հետ համատեղ: Երկրորդ գիտաժողովը կլինի բնագիտական հիմնախնդիրների վերաբերյալ:

Անհերքելի ճշմարտություն է, որ գիտության սաղմերը դրվում են դպրոցում, հետևաբար այն պետք է ուժեղացնել: «Ինձ խորապես ոգևորել է ակադեմիայի նախագահի՝ Արցախի գյուղերի տաղանդավոր երիտասարդներին գործուղելու առաջարկը,- ասում Լ. Ղարախանյանը:- Մենք շուտով հանդես կգանք հայտարարությամբ, որ հրավիրում ենք երիտասարդ տաղանդավոր մարդկանց՝ բնագիտական առարկաներ դասավանդելու Արցախի գյուղերի դպրոցներում: Ծախսերը հոգալու է ակադեմիան, մեզանից միայն կախված է լինելու նրանց մնալու տեղն ապահովելը»: Լ. Ղարախանյանը հավելեց նաև, որ ԿԳՄՍ-ն շարունակելու է գիտական ճամբարներ Արցախի բնագիտական հակումներով երեխաներին ուղարկելը: Արդեն երկու տարի է՝ նման երեխաներին ուղարկում են Բյուրականի աստղադիտարանի կողմից կազմակերպվող ճամբարը, և դրական արդյունքները տեսանելի են: Կկազմակերպվեն նաև գիտական երիտասարդական ճամբարներ: Անցյալ տարի երկու մասնակից ենք ունեցել Արցախի գիտական կենտրոնի երիտասարդ կադրերից:

Գիտությունը երիտասարդներին գրավիչ դարձնելու համար կարևոր հանգամանք է նաև ֆինանսական կողմը: Ընթացիկ տարում երկու նորություն կա այդ հարցում, տեղեկացնում է ԱՀ ԿԳՄՍ նախարարը: Առաջինը գիտությամբ զբաղվող՝ գիտական ծրագրերում ընդգրկված մարդկանց հավելավճարներ տրամադրելն է: Այդ կապակցությամբ փոփոխություն է մտցվել ԼՂՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 2-ի հ. 714/Ն որոշման մեջ: Գիտական ծրագրերում ընդգրկված գիտության թեկնածուն ամսական կստանա 25 հազար, իսկ դոկտորը՝ 55 հազար դրամ հավելավճար: Գիտական ծրագրերում ընդգրկվում են մրցույթով՝ ԱՀ կառավարության հայտարարած թեմաների գծով: Բացի դրանից, Արցախի գիտական կենտրոնի գիտաշխատողները, որոնք անցել են որակավորման փուլերը (գիտական թեմաներում ընդգրկված լինել, միջազգային հանդեսներում ունենալ տպագրված հոդվածներ և այլ չափանիշներ), այս տարվանից ստանալու են բարձր գործակիցներով աշխատավարձ:

«Գիտությունը, բնագիտական առարկաների գծով մանկավարժական մասնագիտությունը մենք սկսում ենք գրավիչ դարձնել»,- շարունակում է այս ուղղությամբ քայլերը ներկայացնել ԿԳՄՍ նախարարը: Մշակվում է ծրագիր, որով կխթանեն բնագիտական ցիկլի մանկավարժական կադրեր պատրաստելու գործընթացը: Բնագիտական հակումներ ունեցող երեխաներին պետք է աճեցնել դպրոցից: Ֆիզիկա, քիմիա մասնագիտություն ընտրած դիմորդը պետք է համոզված լինի, որ ընտրելով այդ մանկավարժական մասնագիտությունները, ապահովված է լինելու նորմալ վարձատրվող աշխատանքով: Այդ նպատակով նախարարությունը սկսում է վերականգնել և հզորացնել «Իվան Աթայան» ֆոնդը: Առաջիկայում ֆոնդահայթայթման աշխատանքներ է սկսում ՌԴ հայկական համայնքների շրջանում: Նպատակն է՝ ունենալ տեխնիկական, ինժեներական և բնագիտական այլ մասնագիտությունների համար ուսման վճարների, իսկ աշխատելու պարագայում՝ հավելավճարների տրման ֆոնդ:

Երևանյան այցի շրջանակում ԱՀ ԿԳՄՍ նախարարը հանդիպում է ունեցել նաև «Անանիա Շիրակացի» ճեմարանում, որտեղ սովորում է բնագիտական հակումներով արցախցի յոթ երեխա: Նոր ուսումնական տարում «Անանիա Շիրակացի» ճեմարանի մոդելով միջազգային հանրակրթական դպրոց կգործի Ստեփանակերտում: Ճեմարանցիները կաջակցեն (այդ թվում՝ մասնագետներով) ծրագրի ներդրմանը՝ նման ձևով օգնելով վիրավոր Արցախին:

Տարվա ընթացքում բնագիտական լաբորատորիաներով կհագեցվի Արցախի դպրոցների մեծ մասը: «21-րդ դարում գիտությունը ենթակա չէ ոչ մի քաղաքական ամբիցիաների ու քաղաքական ոչ մի օրակարգերի չի կարող ստորադասվել: Մենք կարող ենք գիտական լուրջ արդյունքներով աշխարհում ասելիք ունենալ: Երեսուն տարի, ինչպես պարոն Սաղյանն է ասում, ոչինչ չենք արել այդ ուղղությամբ: Նա ասում է, որ եթե մենք ճիշտ ու գրագետ գործեինք ու գիտությունը զարգացնեինք, այս օրին չէինք հասնի: Եվ բերել է Ադրբեջանի օրինակը. ինչպես են նրանք աշխատել և ինչպես՝ մենք: Բայց հիմա էլի ուշ չէ կորցրածը վերականգնելու և հետևողական աշխատանքով առաջ գնալու համար»,- ասում է Լ. Ղարախանյանը:

ՀՀ ԳԱԱ-ում հանդիպման ժամանակ Լ. Ղարախանյանը ԱՀ ԿԳՄՍՆ «Լույսի առաքյալը» մեդալով պարգևատրեց ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանին: Չինաստանի կառավարության ամենաբարձր՝ «Բարեկամություն» շքանշանով (տրվում է այդ երկրում մեծ ներդրում ունեցող անձանց, և հավասարազոր է «Ազգային հերոս»-ին), Եվրոպական Միության Դեկարտի մրցանակով պարգևատրված Աշոտ Սաղյանը հպարտորեն ընդունեց Արցախի կրթական գերատեսչության մեդալը՝ ասելով. «Այս մեդալն ինձ համար ամենաբարձր նվերն է»:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԻՄՈՐԴ - 2022

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 27-ի N1449-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2022-2023 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
27 դեկտեմբերի 2021 թվականի
N 1449-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	✹ 011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.11.6 Կերպարվեստ	Գծն	Գն		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	✹ 011401.24.6 Կենսաբանություն և քիմիա	Կ(գ) կամ Քբ(գ)	Քբ(գ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.25.6 Մաթեմատիկա և ֆիզիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների) - անգլերեն և հայերեն լեզուներ	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031301.00.6	**Հոգեբանություն**				
	031301.01.6 Հոգեբանություն	Հլգ(գ)	Կ(գ)**		Օտլ(գ)*
041201.00.6	**Ֆինանսներ**				
	041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ(գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.24.6 Կենսաբանություն և քիմիա	Կ(գ) կամ Քբ(գ)	Քբ(գ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**				
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ(գ)*
061101.00.6	**Ինֆորմատիկա (*համակարգչային գիտություն*)**				
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

2. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես և ֆինանսներ	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
071403.00.6	**Ռադիոտեխնիկա և կապ**				
	071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**				
	✹ 072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	Մ(գ)	Ֆ(գ)** կամ Քբ(գ)**		Հլգ(գ)*
073101.00.6	**Ճարտարապետություն**				
	073101.01.6 Ճարտարապետություն	Նկ	Գծ		Հլգ(գ)*
073102.00.6	**Քաղաքային տնտեսություն**				
	073102.01.6 Քաղաքային ենթակառուցվածքների կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական, քաղաքացիական շինարարություն և կոնստրուկցիաների նախագծում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	✹ 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ)	Կ(գ)** կամ Քբ(գ)**		Հլգ(գ)*
084101.00.6	**Անասնաբուժություն**				
	✹ 084101.01.6 Անասնաբուժություն	Մ(գ)	Կ(գ)** կամ Քբ(գ)**		Հլգ(գ)*

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես և ֆինանսներ	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
071301.00.6	**Էներգետիկա**				
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական, քաղաքացիական շինարարություն և կոնստրուկցիաների նախագծում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	073201.03.6 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում , շինարարություն, կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ)	Կ(գ)** կամ Քբ(գ)**		Հլգ(գ)*

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0411.01.5	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0612.01.5	Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր (հիմնական կրթությամբ)
0716.17.5	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)
0731.01.5	Քաղաքաշինական կադաստր (հիմնական կրթությամբ)
0738.03.5	Ջրամատակարարում և ջրահեռացում (հիմնական կրթությամբ)
0811.01.5	Գյուղատնտեսագիտություն (հիմնական կրթությամբ)
0811.07.5	Անասնաբուժություն (հիմնական կրթությամբ)

3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
031801.00.6	**Միջազգային հարաբերություններ**				
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ***	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
031801.00.6	**Միջազգային հարաբերություններ**				
	031801.01.6 Միջազգային հարաբերություններ***	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0114.01.5	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)
0112.01.5	Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ)
0411.01.5	Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0412.01.5	Ֆինանսներ (հիմնական կրթությամբ)
0413.01.5	Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0421.01.5	Իրավագիտություն (միջնակարգ կրթության հիմքով)
0613.01.5	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)
0911.01.5	Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
1041.01.5	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

4. «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

4.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների) - անգլերեն և հայերեն լեզուներ	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

4.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)**		Օտլ (գ)*
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ (ըստ լեզուների) - անգլերեն և հայերեն լեզուներ	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)		Օտլ (գ)*
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀՊ(գ)		Օտլ (գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
021201.00.6	Դիզայն				
	021201.01.6 Դիզայն	Կոմպ	Գծն և Գն		Հլգ(գ)*
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	Կոմպ	Գծն և Գն		Հլգ(գ)*

Օգտագործված հապավումներ

(բ) բանավոր
(գ) Գրավոր
Ա Աշխարհագրություն
Անգլ Անգլերեն
Գծ Գծագրություն
Նկ Նկարչություն
Գծն Գծանկար
Գն Գունանկար
Օտլ Օտար լեզու
ԸՖՊ Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն
Կոմպ Կոմպոզիցիա
Հլգ Հայոց լեզու և գրականություն
Մ Մաթեմատիկա
Մասն. Մասնագիտական
ՆԶՊ Նախնական զինվորական պատրաստություն
Ռլ Ռուսաց լեզու
Քիմիա
Ֆ Ֆիզիկա
Կ Կենսաբանություն
ՀՊ Հայոց պատմություն

Ծանոթություններ

✹ Նշված մասնագիտություններով անվճար ուսուցման համակարգի մրցույթին կարող է մասնակցել նաև երկու աստղանիշով (**) նշված առարկայից ընդունելության քննությունից 6,0 մինչև 7,25 միավոր ստացած դիմորդը. առաջնահերթությունը տրվում է այն դիմորդներին, ովքեր մրցույթին մասնակցում են երկու առարկաներից միասնական քննություններից 7,5 և բարձր միավորների արդյունքներով:

* Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

**Նշված առարկայից ընդունելության քննությունից 6,0 մինչև 7,25 միավոր ստացած դիմորդը կարող է մասնակցել տվյալ մասնագիտության թափուր վճարովի տեղերի մրցույթին:

*** Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:

Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն): Օտար լեզու մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված 4 առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 29-ի N1475-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 152-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի ընդունելության մրցույթի արդյունքներով ընդունված և Արցախի Հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի պետական բյուջեից փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 152-Ն որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում՝

ա. «2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ» բառերը փոխարինել «2020-2021 ԵՎ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ» բառերով.

բ. «ՄՐՑՈՒՅԹԻ» բառը փոխարինել «ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ» բառով.

գ. «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» բառերից հետո հանել «ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ» բառերը.

2) որոշման 1-ին կետում «2020-2021 ուսումնական տարվա» բառերը փոխարինել «2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների» բառերով.

3) որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 1475-Ն որոշման

«Հավելված
Արցախի Հանրապետության Կառավարության
2021 թվականի մարտի 1-ի N 152-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՏԵՂԵՐՈՎ 2020-2021 ԵՎ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների բակալավրի ընդունելության մրցույթների արդյունքներով ընդունված, Արցախի Հանրապետությունում բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի՝ պետական բյուջեից փոխհատուցման կարգը (այսուհետ՝ փոխհատուցում):

2. Փոխհատուցման գումարի չափը համապատասխանում է տվյալ ուսումնական հաստատության կողմից նախատեսված կամ սույն կարգով սահմանված ուսման վարձի փոխհատուցման համապատասխան չափերին:

3. Փոխհատուցման գումարը հատկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ յուրաքանչյուր կիսամյակի համար ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվող հայտերի հիման վրա՝ ուսման վարձի գումարի նշումով:

4. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերով 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների բակալավրի ընդունելության մրցույթների արդյունքներով հաշվեգրված դիմորդին՝

1) փոխհատուցում տրվում է, եթե ընտրել է այնպիսի մասնագիտություն, որը բացակայում է Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների ընդունելության մասնագիտությունների ցանկերից և նրա տվյալները համապատասխանում են սույն ենթակետի պարբերություններով նշված պայմաններից որևէ մեկին.

ա. 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության մրցութային առարկայի քննությունից նա հավաքել է 15.00 և ավելի բարձր միավոր, իսկ 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության մրցութային առարկաների քննություններից՝ 30.00 և ավելի բարձր միավոր,

բ. նրա սպա ծնողը պահեստազորի հաշվառումից հանվել է սահմանային տարիքը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով,

գ. նրա սպա ծնողը ծառայում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունում,

դ. նրա սպա ծնողը ծառայում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կամ զինված ուժերում, իսկ ընտանիքը հաշվառված և փաստացի բնակվում է Արցախի Հանրապետությունում,

ե. նրա սպա ծնողը ստանում է զինվորական կենսաթոշակ,

զ. նա 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով տեղահանված, Արցախի Հանրապետության հաշվառում ունեցող պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման համակարգում սովորողներին՝ 50%-ի չափով:

2) փոխհատուցումը դադարեցվում է կամ չի տրվում, եթե նա՝

ա. հեռացվել է տվյալ ուսումնական հաստատությունից,

բ. հեռացվել է ակադեմիական պարտքերի առաջացման պատճառով և վերականգնվել է ուսումը շարունակելու նպատակով,

գ. տեղափոխվել է այլ ուսումնական հաստատություն,

դ. բարձրագույն ուսումնական հաստատության ներսում փոխել է մասնագիտությունը,

ե. ունի կրեդիտներով սահմանված պարտքեր նախորդ կիսամյակներից,

զ. ուսման վարձի փոխհատուցում է ստանում այլ կազմակերպության կամ անհատի կողմից:

5. Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում՝

1) փոխհատուցում տրվում է.

ա. առկա ուսուցման վճարովի համակարգի 1-ին և 2-րդ կուրսերում սովորող ուսանողներին,

բ. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 3-րդ, 4-րդ կուրսերի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող ուսանողներին,

գ. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 1-4-րդ կուրսերի առկա ուսուցման վճարովի համակարգում ուսումը շարունակելու նպատակով ակադեմիական արձակուրդից վերադարձած ուսանողներին,

դ. ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 1-ին և 2-րդ կուրսերի առկա ուսուցման վճարովի համակարգում ուսումը շարունակելու նպատակով ակադեմիական արձակուրդից վերադարձած ուսանողներին,

ե. եթե ուսանողը առկա ուսուցման համակարգ է տեղափոխվել հեռակա ուսուցման համակարգից և սովորել է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության առկա ուսուցման համակարգում առնվազն մեկ կիսամյակ,

զ. եթե ուսանողը բարձրագույն ուսումնական հաստատության ներսում փոխել է մասնագիտությունը և սովորել է տվյալ մասնագիտությամբ առնվազն մեկ կիսամյակ,

է. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 4-ի N 859-Ա որոշմամբ հաստատված պիլոտային ծրագրով որոշ մասնագիտությունների գծով սովորող ուսանողներին՝ կիսամյակային դրական արդյունքների հիման վրա,

ը. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով տեղահանված, Արցախի Հանրապետության հաշվառում ունեցող, առկա ուսուցման համակարգում սովորողներին՝ ուսման վարձի 100%-ի, իսկ հեռակա ուսուցման համակարգում սովորողներին՝ 50%-ի չափով,

թ. հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրս ընդունված պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գերազանցությամբ ավարտած շրջանավարտ ուսանողներին՝ 100%-ի, մնացածներին՝ 50%-ի չափով, իսկ առկա ուսուցման համակարգ առանց ակադեմիական պարտքերի տեղափոխված 15 և բարձր տարեկան միջին որակական գնահատական ապահոված ուսանողը՝ 100%-ի չափով,

ժ. պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի առկա ուսուցման համակարգում սովորող զոհված զինծառայողների ծնողներին՝ 100%-ի, հեռակա ուսուցման համակարգում սովորող զոհված զինծառայողների այրիներին, զավակներին և ծնողներին՝ 50%-ի, Արցախյան պատերազմների 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ ուսանողներին՝ 100%-ի չափով,

2) փոխհատուցումը դադարեցվում է կամ չի տրվում, եթե ուսանողը.

ա. փոխատեղման արդյունքում վճարովի ուսուցման համակարգից տեղափոխվել է անվճար ուսուցման համակարգ.

բ. հեռացվել է (ազատվել է) տվյալ ուսումնական հաստատությունից,

գ. հեռացվել է (ազատվել է) և վերականգնվել է ուսումը շարունակելու նպատակով,

դ. տեղափոխվել է այլ ուսումնական հաստատություն,

ե. բարձրագույն ուսումնական հաստատության ներսում փոխել է մասնագիտությունը՝ բացառությամբ «081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա», «084101.01.6 Անասնաբուժություն», «071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապե, «011401.24.6 Կենսաբանություն և քիմիա», «011401.25.6 Մաթեմատիկա և ֆիզիկա»ե, «011401.04.6 Ֆիզիկա» և «011401.02.6 Քիմիա» մասնագիտությունների, ինչպես նաև այն ուսանողների, ովքեր վերադարձել են ակադեմիական արձակուրդից և տեղափոխվել հարակից կրթական այլ ծրագիր իրենց ուսանած կրթական ծրագրի՝ համապատասխան խմբի բացակայության պատճառով,

զ. տվյալ կիսամյակում առկա ուսուցման համակարգ է տեղափոխվել հեռակա ուսուցման համակարգից,

ԿԱՐԳ

է. ունի կրեդիտներով սահմանված պարտքեր նախորդ կիսամյակներից,

ը. ստանում է երկրորդ մասնագիտություն,

թ. ընդգրկված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 14-ի N 66 և 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 910-Ն որոշումներով սահմանված խմբերում,

ժ. ուսման վարձի փոխհատուցում է ստանում այլ կազմակերպության կամ անհատի կողմից:

6. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝

1) փոխհատուցում տրվում է.

ա. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի միջին մասնագիտական կրթական ծրագրերով, «Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան պետական բժշկական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան պետական երաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության 1-4-րդ կուրսերի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող ուսանողներին,

բ. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի միջին մասնագիտական կրթական ծրագրերով, «Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան պետական բժշկական քոլեջ»ե պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան պետական երաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության 1-4-րդ կուրսերի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող ուսանողներին՝ ակադեմիական արձակուրդից վերադարձած ուսանողներին,

գ. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով տեղահանված՝ Արցախի Հանրապետության հաշվառում ունեցող՝ Արցախի Հանրապետության պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, այդ թվում Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանին կից գործող քոլեջի առկա ուսուցման համակարգում սովորողներին՝ 100%-ի չափով,

դ. միջին մասնագիտական ուսումնական հաստատության ներսում փոխել է մասնագիտությունը և սովորել է տվյալ մասնագիտությամբ առնվազն մեկ կիսամյակ.

2) փոխհատուցումը դադարեցվում է կամ չի տրվում, եթե ուսանողը.

ա. փոխատեղման արդյունքում վճարովի ուսուցման համակարգից տեղափոխվել է անվճար ուսուցման համակարգ,

բ. հեռացվել է տվյալ ուսումնական հաստատությունից,

գ. հեռացվել է և ուսումը շարունակելու նպատակով վերականգնվել է,

դ. տեղափոխվել է այլ ուսումնական հաստատություն,

ե. ունի առարկայական պարտքեր նախորդ կիսամյակներից,

զ. ստանում է երկրորդ մասնագիտություն,

է. օգտվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 14-ի N 66 որոշմամբ հաստատված փոխհատուցումից,

ը. ուսման վարձի փոխհատուցում է ստանում այլ կազմակերպության կամ անհատ անձի կողմից:

7. Եթե բարձրագույն կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության առկա ուսուցման վճարովի համակարգի ուսանողն օգտվում է ուսումնական հաստատության կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի իրավունքից, ուսման վարձի մասնակի փոխհատուցում է ստանում այլ կազմակերպության կամ անհատ անձի կողմից, ապա փոխհատուցվում է վարձի մնացորդ մասը:

8. Արցախի Հանրապետության բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվող հայտերը ճշգրտվում են և ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակում ներկայացվում Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողները յուրաքանչյուր կիսամյակի ավարտին Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն են ներկայացնում քննաշրջանի արդյունքների վերաբերյալ համապատասխան տեղեկանք, որի հիման վրա որոշում է կայացվում նրա վարձի փոխհատուցումը շարունակելու կամ դադարեցնելու մասին:

9. Փոխհատուցման հատկացման հետ կապված փաստաթղթերը պահվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում և ուսումնական հաստատություններում:

10. Ուսումնական հաստատությունները կիսամյակների արդյունքներով փոխհատուցման գումարների վերաբերյալ մեկամսյա ժամկետում հաշվետվություն են ներկայացնում Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Արձագանքում են տպագրվածին

ԿԱ ԽՈՐՀԵԼՈՒ, ՄՏԱՀՈԳՎԵԼՈՒ ԱՌԻԹ

«Լուսարար»-ի հերթական համարներից մեկում կարդացի, որ Ուսուցչի մասնագիտական տոն օրվա կապակցությամբ բնագիտական առարկաների օլիմպիադայում հաջողություն գրանցած հանրապետության մի խումբ ուսուցիչներ նախարարության կողմից արժանացել են դրամական պարգևի: Ի սրտե շնորհավորում ու ողջունում եմ բոլոր նրանց, ովքեր արժանացան պարգևի (օլիմպիադան այն հայելին է, որտեղ արտացոլված է ուսուցիչ-աշակերտ համատեղ աշխատանքի արդյունքը) և բոլոր նրանց, ովքեր բարեխղճորեն և գիտակցորեն են մոտենում ուսուցչի շատ պատասխանատու գործին: (Սովորաբար նման պահին օգտագործում ենք նաև «պատվաբեր» բառը, բայց դիտավորյալ չօգտագործեցի՝ եզրահանգումը թողնելով ընթերցողին):

Ուսուցիչներին պարգևատրելու մասին կարդալը կամ լսելը հաճելի է, բայց որ այն առիթից առիթ է՝ մտահոգիչ: Նաև մտահոգիչ է, որ շատ քիչ ուսուցիչներ են ներկայացվում պարգևների: Սակայն մտորումներս թղթին հանձնելու հանգամանքը այլ մտահոգության հետևանք է: Պարգևատրվածների 46%-ը կենսաբանության, 31%-ը՝ աշխարհագրության ուսուցիչներ են և միայն 15%-ը՝ քիմիա և 8%-ը՝ ֆիզիկա մասնագիտության ուսուցիչներ (տոկոսները կլորացված են իմ կողմից): Շարունակ ինքս ինձ հարց եմ տալիս. ախր երբ բնագիտական առարկաներ ենք ասել, առաջին հերթին մաթեմատիկա ենք հասկացել, նոր՝ մյուս առարկաները, շատ անգամ էլ կասկածել ենք, արդյո՞ք, աշխարհագրությունն ու կենսաբանությունն էլ են մտնում այդ առարկաների ցանկի մեջ: Իսկ գուցե մաթեմատիկայի օլիմպիադայի մասին եղել են պարզաբանումներ, սակայն վրիպե՞լ են իմ աչքից (երանի այդպես լիներ), միևնույն է, կա մտահոգություն, և շատ լավ կլիներ ավելի ծավալուն քննարկումների համար: Օլիմպիադայի արդյունքները դիտարկելիս զավեշտի նման մի բան էլ է ի հայտ գալիս, որն արդեն իսկ կարելի է մեկնաբանել մաթեմատիկայի լեզվով: Բնագիտական առարկաներին հատկացված ժամաքանակը ըստ ուսումնական պլանի բացի մաթեմատիկայից մեկ դրույքի չի հասնում: Ասել է թե՝ ժամաքանակը հակադարձ համեմատական է օլիմպիադայի արդյունքներին. քիչ ժամ-շոշափելի արդյունք, շատ ժամ՝ նվազ-արդյունք: Այնուհանդերձ, մտահոգությունս փարատելու համար նախընտրեցի հանդիպել դպրոցի ուսուցիչների, մաթեմատիկայի բաժնի մի խումբ շրջանավարտների հետ: Վերջիններս շատ ավելի գանգատվեցին մաթեմատիկայի բուհական ծրագրերից: Դրանք գրեթե կապ չունեն դպրոցական ծրագրերի հետ: Բուհում մատչելի գրականության պակաս կա, իսկ շատ առաջադրանքների պատասխաններ հեշտությամբ գտնում ենք համացանցում, և ուսանողներին մտածելու, խորհելու, անցածը վերհիշելու, նյութի մեջ խորանալու անհրաժեշտություն չի լինում: Ծրագրերի մասին մի դեպք էլ հիշեցի իմ ուսանողական կյանքից՝ 70-ական թվականներին: Մեթոդիկայի բաժնի ուսանողներիս նույնպես բարձրագույն մաթեմատիկա էր դասավանդվում: Երջանկահիշատակ դասախոս Ս. Պետրոսյանը մեր դժգոհությանը պատասխանեց շատ կարճ. «Ծրագիրն է այդպես, ի՞նչ անենք»:

«Ինչ վերաբերում է կենսաբանություն առարկային,- ներկայացրեց ուսուցչուհի Ա. Պողոսյանը,- կասեմ, որ ծրագիր-դասագիրք մի ամբողջություն են կազմում, նյութը շարադրված է մատչելի, թեստային աշխատանքները բարդ չեն, համապատասխանում են դասագրքում առկա թեմաներին: Մինչդեռ նույնը չեմ կարող ասել քիմիայի, ինչու չէ, նաև ֆիզիկայի մասին: Փոքր դպրոցներում այդ առարկաների նյութատեխնիկական ապահովվածության մակարդակը պակաս է, անհրաժեշտ փորձեր՝ լաբորատոր աշխատանքներ կատարելը լուրջ դժվարությունների հետ է առնչվում: Չէ՞ որ ավելի լավ է մեկ անգամ տեսնելը, քան մի քանի անգամ լսելը: Քիմիայի թեստերը ոչ միշտ են համապատասխանում է ծրագրին, դասագրքին:

Այն, որ ծրագրերի, դասագրքերի, առարկայական չափորոշիչների միջև ինչ-որ անհամամասնություններ կան, ակնհայտ է, այդ մասին շատ է խոսվել, գրվել, մանկավարժական մամուլը շատ անգամ է անդրադարձել դրան: Այն, որ բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրությունների խիստ անկում կա, դա էլ ակնհայտ է: Ստացվում է, որ հարցի լուծման ուղիների փնտրտուքը ինչպես պետության, շահագրգիռ կազմակերպությունների (դպրոց, նախարարություն, կրթության տեսչություն, բուհ), այնպես էլ ողջ հասարակության ուշադրության կենտրոնում պիտի լինի:

Մի հեշտ թվացող հարցի պստասխան միշտ էլ իմ ուշադրության կենտրոնում է եղել: Դպրոցը վատ շրջանավա՞րտ է տալիս բուհին, թե՞ բուհը՝ վատ մասնագետ դպրոցին (հա՞վն է ձվից, թե՞ ձուն՝ հավից): Այն, որ մեկը մյուսով պայմանավորված է, կլինի ամենադյուրին պատասխանը, սակայն ինձ թվում է, որ բուհը 4-6 տարիների (ներառյալ մագիստրոսությունը) ընթացքում՝ համարյա դպրոցական տարիների կիսով չափ, բայց առավել հասուն տարիներ, պետք է որ կարողանա շտկել բաց թողածը: Բայց արի ու տես, դա տեղի չի ունենում. հիմնական պատճառներից մեկը մնում է այն, որ շրջանավարտների գրեթե 90%-ը (եթե ոչ ավելին) դառնում են ուսանողներ, իսկ ամենաթույլերը՝ մանկավարժական ուսանողներ, որոնց ուշադրության կենտրոնում բարձրագույն կրթության դիպլոմ ունենալն է: Իսկ դպրոցներում թափուր տեղեր՝ որքան ուզես:

Երբ այս հարցերի շուրջ մտորումների մեջ էի, Արցախի հեռուստատեսությամբ մի հաղորդում էր հեռարձակվում: Հարցազրույց էր որպես լավագույն պարգևատրված երկու ուսանողի հետ: Ինձ հետաքրքրեց այն, որ Ռուզաննա Սահակյանը մաթեմատիկայի 3-րդ կուրսի ուսանողուհի է (վերջապես լավ սովորող մաթեմատիկներ էլ կան): «Ես մասնագիտությամբ մաթեմատիկ եմ, հոգով՝ բանասեր»,- ներկայացավ Ռուզաննան: Հոգով բանասեր լինելն օգնեց ուսանողուհուն հայրենիքի և մասնագիտության վերաբերյալ շատ վստահ ու ջերմ խոսքեր ասել: Ես ինքս ինձ համոզում էի, որ բանասեր լինելը, անշուշտ, կօգնի նրան լավ մասնագետ դառնալ, բայց երբ ուսանողուհին իր ակտիվությունը շաղախեց նաև բանահյուսությամբ, որը նույնպես անթեղված է նրա հոգու խորքում, գրանցեցի 1:2 հաշիվ (ինչպես ֆուտբոլում), որտեղը 1-ը մաթեմատիկան է:

Այսօր քան երբևիցե նախարարությունն էլ մտահոգված է հանրակրթական դպրոցներում բնագիտական առարկաների, հատկապես մաթեմատիկայի դասավանդման ցածր մակարդակով: Կասկած չկա, որ համակարգում արմատական փոփոխություններ են անհրաժեշտ: Հենց այդ նպատակին է ուղղված մեկ տասնյակից ավելի «Արմաթ» խմբակների, ռոբոտաշինության և այլ տեխնիկական խմբակների բացումը հանրապետության մի շարք դպրոցներում: Դրան է միտված նաև «Գիտությունը դպրոց բերելու» և այդ ճանապարհին «Մաթեմատիկն Արցախում» ծրագրի ներդրումը հանրակրթական դպրոցում: Սա նշանակում է, որ լավագույն աշակերտները կլինեն նախարարության տեսադաշտում: Հարցի լուծմանը կնպաստեն նաև մաթեմատիկայի ուսուցիչների համար ինչպես հաճախակի, այնպես էլ առանձնահատուկ դասընթացների, սեմինար-պարապմունքների կազմակերպումը, մեթոդական ցուցումներ տալու նպատակով հաճախակի տեսչական ստուգումների անցկացումը, հանրապետությունում հայտնի ուսուցիչների աշխատանքի փորձի ուսումնասիրումն ու տարածումը: Դպրոցի տնօրեններից պահանջել մաթեմատիկայի ուսուցիչների դասավանդման դրվածքի ուսումնասիրում ու տեղեկագրերի ներկայացում, մաթեմատիկայի աշխատանքների թեստերի կազմում ու ներկայացում բաժիններ, որից կարելի կլինի որոշակի եզրահանգումներ անել, լավերը խրախուսել և օգտագործել մյուս դպրոցներում:

Շատ կարևոր նախապայման պետք է դարձնել ուսուցչի աշխատանքի, նրա մասնագիտական կարողությունների՝ ըստ արժանվույն գնահատումը: Կա մի պարզ ճշմարտություն. տնտեսության, քաղաքականության բնագավառներում, հասարակական կյանքում և բոլոր մյուս ոլորտներում հաջողությունները միայն ու միայն ուսուցչի բեղմնավոր աշխատանքի արդյունք են, նրան գնահատելու արդյունք: Բոլոր անհաջողությունների առկայությունը ուսուցչին չգնահատելու հետևանք է: Միաժամանակ համակարգն անհրաժեշտ է զերծ պահել արտոնություններով (վիրավոր, հաշմանդամ, պաշտոնյայի զավակ, զորացրված սպա և այլն) մուտք գործելուց: Գիտակցենք, որ վատ, անբարեխիղճ աշխատանքը միայն տարիներ հետո է երևում: Կհասնե՞նք դրան՝ կլինի բացարձակ նվաճում:

Թերթից տեղեկացա, որ նախարարի հավաստմամբ, նոր տարվանից կբարձրանա Արցախի գիտական կենտրոնի աշխատողների աշխատավարձը: Իհարկե, աշխատողների սոցիալական վիճակի բարելավումը կարևոր նախադեպ է լավ ու որակյալ աշխատանքի համար: Սակայն ուզում եմ նշել, որ կրկին վերևից ներքև ենք ուզում հարցը լուծել: Այնինչ հիմքերը պետք է ամուր լինեն, իսկ գիտության զարգացման հիմքերը դրվում են դպրոցում: Շարունակում ենք գնահատել ծառի սաղարթները՝ արմատները թողնելով ուշադրությունից դուրս:

ԼԵՎՈՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշճան

ՍԵՐՈՒՆԴ

ԴՊՐՈՑՈՒՄ ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ Է...

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում կարևոր տեղ են զբաղեցնում արիության դասերը: Արցախի բոլոր կրթօջախներն ունեն փառքի սրահ կամ անկյուն: Ցավոք, 44-օրյա պատերազմն ավելացրեց նահատակներին նվիրված վահանակները: Սովորողները, ամեն առավոտ, մտնելով կրթօջախ, նայելով նրանց հայացքներին, հարգանքով լուռ իրենց խոնարհումն են բերում և հետո անցնում իրենց ուսումնական առօրյային: Իսկ առանձին օրեր այդտեղ անցկացվում են նրանց նվիրված հուշ-ցերեկույթներ, միջոցառումներ:

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի փառքի սրահում սեպտեմբերի 4-ին բացվել է նոր՝ 44-օրյա պատերազմում նահատակված՝ դպրոցի 21 շրջանավարտների հիշատակին նվիրված վահանակ: Նրանց մեջ է Արեն Միրզոյանը: Հունվարի 14-ին դպրոցում կազմակերպված հերթական արիության դասը նրան էր նվիրված. այդ օրը քաջորդին կդառնար 20 տարեկան:

Բնականաբար արիության դասի մեկնարկը տրվեց փառքի սրահից՝ Արենի և մյուս բոլոր նահատակներին հարգանքի տուրքով: Ներկա էին նաև հյուրեր՝ ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ փոխնախարար Միքայել Համբարձումյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Թերեզա Ղարախանյանը, Զոհված և անհայտ կորած զինծառայողների միության անդամներ, Արենի ծնողները, համադասարանցիներ, ուսուցիչներ, աշակերտներ: Նշենք, որ ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի աշխատասենյակի պատից կախված է Արեն Միրզոյանի լուսանկարը, որը խորհրդանշում է մեր բոլոր զոհված ուսանողների հավաքական կերպարը:

Արիության դասը բացեց դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը: Նա էլ է վշտակիր մայր. վերջերս է կորցրել Արցախյան պատերազմների բովով անցած, 44-օրյայում երկու ճակատով՝ անբուժելի հիվանդության և իր զինվորի կողքին կռիվ մղած Արարատ որդուն: Մանկավարժական կոլեկտիվի առաջնորդն այսպես դիմեց հավաքվածներին.

- Ինչքան էլ ցավի մեջ՝ մեր ոգին դրոշ դարձրած պետք է առաջ նայենք, պետք է առաջ շարժվենք, այդ ցավից պետք է ծնվի ցասում, պետք է ծնվի պայքարը: Պետք է հիշատակի օրերը նշել, պետք է փառաբանել մեր բոլոր հերոսներին, բոլոր Արեններին, որոնք մեր ժողովրդի ուժի, հզորության, հավերժության հավաքական կերպարն են: Նրանք նահատակվեցին, որ հայրենիքը ապրի: Իսկ հայրենիքն ապրեցնողները այսօրվա մատաղ սերունդն է լինելու: Արիության մեր դասին մասնակցում են արժանապատիվ քաղաքացիներ, նրանք, ովքեր մտահոգված են մեր երկրի առկա և հետագա ճակատագրով: Մեր արիության դասը միասնաբար անցկացնելու համար՝ խորին շնորհակալություն բոլորին: Այդպես միասնաբար պետք է կառուցենք մեր հայրենիքը: Եվ այսպես միասնաբար՝ ձեռք ձեռքի տված պետք է առաջ շարժվենք: Հանուն եռագույնի՛ նահատակվեցին մեր տղաները: Այո՛, անհունից է գալիս այն արյան կանչը, որ պետք է միշտ բոլորս վառ պահենք: Ու խնդրում եմ ու նաև պահանջում. երբեք ընկճվածություն չցուցաբերեք, ավելի քան զորեղ, հզոր ոգով պետք է առաջ նայենք:

Փառքի սրահ. դպրոցի սուրբ վայր, որտեղ ամեն առավոտ դպրոցի շուրջ հազար աշակերտ գալիս խոնարհվում, նահատակ տղաների հայացքների առաջ անցնում են իրենց դասասենյակները, և սկսվում է դպրոցական առօրյան: Մենք այդպես կխոնարհվենք մեր հերոսների առաջ, նորից ու հազարերորդ անգամ ուխտ, պատգամ կանենք, որ նրանք իզուր չեն ընկել, իսկ ապրողներս պետք է ճիշտ ապրենք, ճիշտ քայլեր անենք հանուն նրանց թողած մեր չքնաղ հայրենիքի: Եվ նաև խոնարհվում ենք բոլոր նահատակների ծնողների առաջ, որ ծնել, տվել են նման հերոսներ: Սիրելի՛ ծնողներ, ուժեղ եղեք, կորացել եք, բայց պետք է կանգնել, պետք է ելնել, պետք է վստահ քայլենք հանուն մեր զոհված տղաների: Չէ՞ որ նրանք զոհվեցին, որ Հայրենիքն ապրի:

Հարգանքի տուրք մատուցելուց հետո ներկաները բարձրացան դպրոցի սիրելի սան, խելացի, բանիմաց, տնօրենի բնորոշմամբ՝ դեռևս միս ու ոսկորը չպնդացած, չամրացած, բայց հանուն հայրենիքի կյանքը զոհաբերած Արեն Միրզոյանի անունը կրող դասարան՝ շարունակելու հերթական արիության դասը:

Դպրոցի 9-րդ «ա» դասարանը տնօրինության որոշումով կրում է Արեն Միրզոյանի անունը: Արիության դասի նախաձեռնողը դասղեկ Լուսինե Արզանգուլյանն է, որը նաև եղել է Արենի դասղեկը, իսկ դասասենյակը ֆիզիկայի կաբինետն է: Արենն ընդունվել էր ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, բայց չէր հասցրել նստել ուսանողական նստարանին, զորակոչվել է բանակ ու զոհվել ծառայության 100-րդ օրը:

Արեն Միրզոյանի մասին «Լուսաբար»-ը գրել էր իր համարներից մեկում: Այսօր մեր գլխավոր նպատակը չէ նորից անդրադառնալ նրա վառ կենսագրությանը, այլ, թե ինչպես են նոր սերունդը, հասարակության արժանապատիվ քաղաքացիները, պետական այրերը, զոհվածի ծնողները, մյուսները պատկերացնում բոլորիս վարքագիծը, ապրելու կերպը Արցախի հետագա ճակատագիրը կառուցելու ճանապարհին՝ անշուշտ, այդ ամենը նրբորեն հյուսելով օրվա հերոսի կերպարի հետ:

Դժվար էր խոսել դասղեկ Լուսինե Արզանգուլյանի, դասվար Քանաքարա Աբրահամյանի համար, որոնց ունկերում դեռ լսվում են իրենց խելացի, տաղանդաշատ սան Արենի՝ դպրոցի միջանցքներով զրնգուն ծիծաղը, թրթռուն ոտնաձայները: Արենը դպրոցական կյանքը սկսել է այստեղ, ապա շարունակել ֆիզմաթ դպրոցում: Ասելիք շատ ունեն նրա բոլոր դասընկերները, բանակում ծառայող և նրա ծննդյան օրը ներկա Տիգրանը, Տիրանը, Միշկան, որոնց ընկեր Արզանգուլյանը հորդորեց. «Մատաղ լինեմ ձեզ, թշնամին անպատիժ չպիտի մնա»:

Աշակերտներն էլ իրենց խոսքն ասացին. ընկեր Արզանգուլյանը այնքա՜ն է պատմել Արենի մասին, որ ասես անձամբ ճանաչում են նրան. «Մեր եղբա՛յր, խոստանում ենք, որ կշարունակենք քո կիսատ թողած գործը: Մենք բոլորս երդվյալ զինվորներ ենք այս սուրբ հողի: Արենը կյանքը տվեց հայրենիքին, հոգին՝ աստծուն, պատիվը՝ թողեց իրեն, իսկ մեզ տվեց հայրենասիրության դաս»:

Դասարանի ծնող Նոնա Դավթյան.

- Նստած փորձում էի խոսել Արենի հետ, Կարենի, Դավիթի, 5000 և ավելի անունների հետ ու հասկանում, որ պետք է թաքցնեմ հայացքս, որովհետև կա մեղավորության զգացում, կա հանցավորության, հանցավոր անգործությունի զգացողություն: Այո, մենք բոլորս մեղավոր ենք Արենների առաջ, որովհետև 90-ականներից հետո չունեցանք գերհզոր ռազմական արդյունաբերություն, չունեցանք անխոցելի սահմաններ: Մենք հանցավոր ենք այս տղաների առաջ: Արե՛ն, 44-օրյա պատերազմի սրբադասված մեր բոլոր հերոսնե՛ր, դուք նահատակվեցիք հանուն աստվածարար Արցախի, հանուն մեր մի բուռ հայրենի հողի: Արե՛ն, դու նահատակվեցիր հանուն Ամարասի, որպեսզի Մաշտոցյան այբուբենի հնչյունները Ամարասի զանգերի ղողանջների հետ հար թևածեն այս երկնակամարում: Այսօր լճանում են կարոտն ու սպասումը մորդ աչքերում: Այսօր հորդ կրծքի տակ ուռճանում է հպարտությունը, բայց՝ պոռթկացող ցավի հետ շաղախված: Մենք խոնարհվում ենք վշտակիր բոլոր մայրերի առաջ: Հավերժ խոնարհում ձեր առաջ, հավերժ խունկ ու խոնարհում ձեր զավակների առաջ: Նժդեհը պատգամում է. «Հայրենիքները մեռնում են հայրենասիրության պակասից»: Նման արիության դասերը մի-մի կաթիլով կլցնեն մեր հայրենասիրության պակասը: Մենք չենք մեռնի, քանի կա հայ մանկավարժը, որն իր սաների մեջ դնում է հավատ, սեր առ հայրենիք: Համոզված եղեք, այս մկրատված սահմաններն այդպես չեն մնա, մեր հոգու քարտեզագրումն ավելին է. այն ձգվում է մինչև էրգիրը Նաիրի: Եվ, այդ պատգամը սրբորեն պատգամելով մեր եկող սերունդներին, պիտի ասենք՝ մկրատված քարտեզները լոկ քարտեզներ են, ճանաչի՛ր, աշխա՛րհ, մեր հոգու քարտեզագրումը, այն մինչև Կիլիկիա է ձգվում:

ԿՍ բաժնի պետ Թերեզա Ղարախանյան.

- Դժվար է նման միջոցառումներին խոսք ասել. խորն է կորստի ցավը, անհուն վիշտը, երևի ազգիս ճակատագիրն է միշտ մաքառել, պայքարել հանուն գոյատևման՝ ապացուցելու, որ մենք հայ ենք: Ստեփանակերտի բոլոր հանրակրթական դպրոցներում կազմակերպվում են նման միջոցառումներ, հուշ-ցերեկույթներ, և ամեն մի դպրոց յուրովի է նահատակների ծնողներին ապացուցում, որ մենք նրանց կողքին ենք, որ նրանց ցավը նաև մերն է:

Պետնախարար Արտակ Բեգլարյան.

- Արենի ու մյուս զոհված տղաների մասին ավելի շատ ոչ թե պիտի խոսենք, այլ ավելի շատ գործենք, որովհետև մենք պարտք ենք նրանց մինչև մեր կյանքի վերջը՝ ապացուցելու, որ նրանք իզուր չեն զոհվել: Ու շատ ուրախ եմ, որ այս դասարանում շարունակում են հայրենասիրական դաստիարկություն ստանալ: Շնորհակալություն դպրոցի տնօրինությանը, ուսուցչական կազմին և հատուկ շնորհակալություն Արենի ծնողներ Լիլիթին ու Կարենին: Արենին ես էլ եմ ճանաչել, քանի որ երբեմն հաճախում էի հեղինակային երգի ակումբ և Արենի երգերը լսում: Ու նա միշտ ինձ համար լուսավոր մարդ էր իր երգերով, իր վարվելակերպով: Միշտ հիշում եմ, թե ինչպես էր նա երգում. «Շուշին հայկական է ու տի էլ մննականա»: Իմ հորդորն է, խնդրանք-պահանջն է, որ և՛ Շուշիի, և՛ մյուս նյութական ու ոչ նյութական արժեքների մասով մենք պարտավոր ենք ամեն ինչ անել, որ մնա հայկական, և ողջ Արցախը մնա հայկական, ու մեր սերունդներն ավելի ամուր, ավելի հզոր և ավելի արժանապատիվ հայրենիք ստանան մեզնից:

Արենի հայր Կարեն Միրզոյան.

- Այս մթնոլորտն ստիպեց ինձ խոսել ոչ ստանդարտ արտահայտչամիջոցով. մենք երևի ապագայում կլսենք ադրբեջանական երգ՝ «Վա՜յ, դադա, վա՜յ»:

Արենի մայր Լիլիթ Միրզոյան.

- Բավական շատ հետաքրքրություններ ուներ Արենը, որ աշակերտների հետաքրքրությունների շրջանակը պիտի դառնան: Երգեր կան, որ գուցե երեխաները լսած չկան, բայց քանի որ Արենն է կատարում, իրենց էլ է հետաքրքիր, ու իրենք էլ են երգում: Արենը ֆիզիկա էր սիրում, արդեն շատ երեխաներ կարող են ընտրել ֆիզիկան: Շատ ուրախ եմ, որ Արենը դպրոցում իր անկյունը կունենա ընդհանուր վահանակից բացի: Այս դպրոցում Արենը շատ երջանիկ էր, շատ սիրով էր հաճախում, ու ինքն էլ բոլորի կողմից սիրված էր: Եվ տեսնում եմ, որ մինչև հիմա դա շարունակվում է: Ցանկանում եմ, որ աշակերտներն այստեղ իրոք սովորեն, որովհետև Արենը ամենաշատը սովորելն էր սիրում, ամենաշատը նախանձում էր միայն նրան, ով ավելին գիտի, ու ձգտում էր ամեն ինչի կատարելապես տիրապետել: Նույնն էլ ես այս դասարանի երեխաներին և ընդհանրապես դպրոցի աշակերտներին եմ մաղթում. հնարավոր է ձգտել կատարելության, եթե ցանկություն ունեք: Արենն այդպես էր վարվում: Ուզում եմ, որ այդպիսի ձգտումով դուք շարունակեք:

Նման արիության դասերը ցույց են տալիս, որ մեր դպրոցներում կրթվում-դաստիարակվում է մեր հայրենիքի համար արժանավոր սերունդ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիր 1. Հավասարակողմ եռանկյան AB կողմի Y կետով տարված է ուղիղ, որը հատում է BC կողմը Z կետում, իսկ AC կողմի շարունակությունը՝ X կետում: Ապացուցել, որ եթե $XY = YZ$ և $AY = BZ$, ապա $XZ \perp BC$:



Նկ. 1

Լուծում: Ընտրենք AC կողմի վրա T կետն այնպես, որ $AT = AY$ (նկ. 1): Այդ ժամանակ ATY և CTZ եռանկյունները հավասարակողմ են, TY-ը XTZ եռանկյան միջնագիծը և անկյան կիսորդն է միաժամանակ, հետևաբար $TY \perp YZ$, ուստի $\angle TZY = 30^\circ$ և $\angle YZC = 90^\circ$:

Խնդիր 2. Երկու քառակուսիներ ունեն ընդհանուր գագաթ (նկ. 2): Ապացուցել, որ $AE = CG$:

Լուծում: Դիտարկենք ADE և DCG եռանկյունները: Դրանք հավասար են, ըստ երկու կողմով և նրանցով կազմած անկյան հավասարության հայտանիշի:



Նկ. 2 Նկ. 3

Խնդիր 3. Երեք քառակուսիներ դասավորված են այնպես, ինչպես նկ. 3-ում: Ապացուցել, որ $AB = CD$:

Լուծում: Այս խնդրի լուծումը նման է նախորդ խնդրում կատարված դատողություններին, ուստի այն բաց ենք թողնում:



Նկ. 4 Նկ. 5

Խնդիր 4. Քառակուսու կողմերի վրա անջատված են 4 հավասար հատվածներ և միացված այնպես, ինչպես ցուցադրում է նկ. 4-ը: Ապացուցել, որ նշված երկու անկյուններն իրար հավասար են:

Լուծում: Թող $\angle CML = \alpha$, նկ. 5 : Այդ ժամանակ $\angle DKL = 90^\circ - \alpha$; և $\angle MKP = 180^\circ - (90^\circ - \alpha) - 45^\circ - 45^\circ = \alpha$:

Խնդիր 5. Գտնել քառակուսի վանդակավոր թղթի վրա նկարած երկու անկյունների գումարը (նկ. 6):

Լուծում: Դժվար չէ հասկանալ, որ անկյունների գումարը հավասար է 45°:

Խնդիր 6. Գտնել քառակուսի վանդակավոր թղթի վրա նկարած երեք անկյունների գումարը (նկ. 7):



Նկ. 6 Նկ. 7

Լուծում: $\angle 1 + \angle 2 + \angle 3 = 45^\circ$:

Խնդիր 6. Քառակուսու բոլոր կողմերը բաժանված են 3 հավասար մասերի, և բաժանման կետերը միացված են այնպես, ինչպես երևում է նկ. 8-ում: Ապացուցել, որ $\angle 1$-ը և $\angle 2$-ը իրար հավասար են:



Նկ. 8 Նկ. 9

Լուծում: $\angle 2 + \angle 3 = 45^\circ$, նկ. 9: Եռանկյունի ACB-ն ուղղանկյուն հավասարասրուն եռանկյուն է, ուստի $\angle A = 90^\circ \Rightarrow \angle 3 + \angle 1 = 45^\circ \Rightarrow \angle 1 = \angle 2$:

Խնդիր 7. M կետը $ABCD$ ուղղանկյան AB կողմի միջնակետն է (նկ. 10): H-ը C կետից MD ուղղին իջեցված ուղղահայացի հիմքն է: Ապացուցեք, որ $BC = BH$:

Լուծում: Թող K կետը BC-ի և MH-ի հատման կետն է: Այդ ժամանակ $\square KBM = \square DAM$: Հետևաբար HB-ն ուղղանկյուն KHC եռանկյան միջնագիծն է:

Խնդիր 8. $ABCD$ ուղղանկյան AC անկյունագծի վրա նշված է K կետն այնպես, որ $CK = CB$: BC կողմի վրա նշված է M կետն այնպես, որ $CM = MK$: Ապացուցել, որ $AK + BM = CM$:

Լուծում. BC կողմի շարունակության վրա նշենք E կետն այնպես, որ $BE = AK$ (նկ. 11): Այդ ժամանակ ABC և EKC եռանկյունները հավասար են ըստ երկու



Նկ. 10 Նկ. 11

կողմերի և նրանցով կազմված անկյան: $CM = MK$ հավասարությունից հետևում է, որ KM-ը EKC ուղղանկյուն եռանկյան միջնագիծն է, և $AK + BM = EB + BM = EM = CM$:

Խնդիր 9. ABC եռանկյան BB_1 և CC_1 կիսորդները հատվում են O կետում (նկ. 12): Գտեք $\angle BOC$, եթե հայտնի է A անկյունը:

Լուծում: $\angle BOC$ արտահայտենք OBC և OCB անկյուններով: $\angle BOC = 180^\circ - \angle OCB = 180^\circ - 0{,}5\angle B - 0{,}5\angle C$: Բայց



Նկ. 12 Նկ. 13

$\angle B + \angle C = 180^\circ - \angle A$: Հետևաբար $\angle BOC = 90^\circ + 0{,}5\angle A$:

Խնդիր 10. $ABCD$ քառակուսու ներսում նշված է E կետն այնպես, որ ABE եռանկյունը հավասարակողմ է: AC և BE կողմերը հատվում են F կետում: Ապացուցեք, որ $CE = CF$ (նկ. 13):

Լուծում: CBE Եռանկյունը հավասարասրուն է, քանի որ $BC = BA = BE$: Հետևաբար $\angle CEB = 0{,}5(180^\circ - 30^\circ) = 75^\circ$: ABF եռանկյունում հայտնի են երկու անկյունները, ուրեմն կգտնենք երրորդ անկյունը. $\angle AFB = 180^\circ - 45^\circ - 60^\circ = 75^\circ$: Այսպիսով $\angle EFC = \angle AFB = 75^\circ = \angle CEF$, ուստի $CE = CE$:

Խնդիր 11. Հավասարասրուն եռանկյան գագաթի անկյունը հավասար է 110°, իսկ հիմքը BC-ն է: Եռանկյան ներսում նշված է M կետն այնպես, որ $\angle CBM = 30^\circ$ և $\angle BCM = 25^\circ$ (նկ. 14): Գտեք $\angle AMC$:

Լուծում: Թող BM ուղիղը և AH բարձրությունը հատվում են N կետում (նկ. 15): B և C անկյունները հավասար են՝ $0{,}5(180^\circ - 110^\circ) = 35^\circ$, հետևաբար $\angle ACN = 35^\circ - 30^\circ = \angle ACH - \angle HCN = 5^\circ = 30^\circ - 25^\circ = \angle HCN - \angle MCH = \angle MCN$ և $\angle CNA = 180^\circ - 55^\circ - 5^\circ = 120^\circ = \angle CNM$: Այսպիսով CAN և CMN եռանկյունները հավասար են՝ CN ընդհանուր կողմով և առընթեր անկյուններով: Հետևաբար ACM եռանկյունը հավասարասրուն է, իսկ հիմքին առընթեր անկյունները հավասար են $0{,}5(180^\circ - 10^\circ) = 85^\circ$:



Նկ. 14 Նկ. 15

Օգտագործված գրականություն

1.В. В. Прасолов, Решение задач повышенной сложности по геометрии. Москва «Просвещение», 2019.
2. Համացանցի կայքեր:

Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՐՊՀ ֆիզիկա-մաթեմատիկայի ամբիոն,
մ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար

ՄԱՐԶԱԿԱՆ

ՅՈՒՐԻ ԿԱՐՈԳԼԱՆՅԱՆ. ՉԵՄՊԻՈՆ-ՌԵԿՈՐԴՍՄԵՆ

Անցած տարվա վերջին արցախցի մարզիկները տարբեր մրցաշարերում հաղթանակներ արձանագրեցին: Ընդ որում, մասնակցեցին ինչպես հայրենիքում, այնպես էլ երկրից դուրս ընթացած մրցաշարերի: Մարզական էջի մեր հյուրը ոչ միայն չեմպիոն է, այլեւ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպայի ռեկորդսմեն:

Յուրի Կարոգլանյանը ծնվել է 1999թ. ապրիլի 14-ին: Տասներեք տարեկանից պարապում է Ուժային եռամարտով մարզիչ Արկադի Զաքարյանի մոտ: Ուժային եռամարտն ընդգրկում է երեք մրցութային կարգ՝ կքանիստ ծանրածողով, սեղմում հենարանից եւ ծանրածողով ձգում, որոնց կատարման արդյունքի համադրությամբ էլ որոշում են հաղթողին: Անց են կացվում նաեւ առանձին՝ սեղմում հենարանից վարժությամբ մրցաշարեր:

Արցախցի մարզիկն իր պարապելու տասը տարիների ընթացքում բազմաթիվ մրցանակների եւ չեմպիոնի կոչման է արժանացել՝ մասնակցելով տարբեր մրցաշարերի: ՀՀ բազմակի չեմպիոն է: 2016թ. սկսել է մարզվել ու այդ տարում արդեն մասնակցել Եվրոպայի ուժային եռամարտի առաջնությանը, որը կայացել էր Էստոնիայի Տարտու քաղաքում: Նրան հաջողվել է երկրորդ մրցանակային տեղ զբաղեցնել եւ վերադառնալ արծաթով: Նույն թվականին մասնակցել է ԱՄՆ Կիլան (Տեխաս) քաղաքում ընթացած Ուժային եռամարտի աշխարհի առաջնությանը եւ զբաղեցրել մրցանակային երրորդ տեղ: 2017-ին եւս մասնակցել է Բելառուսի Հանրապետության մայրաքաղաքում՝ Մինսկում կայացած աշխարհի առաջնությանը եւ զբաղեցրել երրորդ մրցանակային տեղ: 2016-ին նա կարողացավ 175 կգ-ով սեղմում հենարանից մրցույթում Եվրոպայի ռեկորդսմեն հռչակվել, իսկ 2017-ին, գերազանցելով իր ռեկորդը, դարձավ աշխարհի ռեկորդակիր 183,5 կգ-ով սեղմում հենարանից մրցապայքարում: 2018թ. Բելառուսում կայացած Ուժային եռամարտի Եվրոպայի գավաթի խաղարկությունում զբաղեցրել է երկրորդ տեղ: 2018թ. Ֆինլանդիայի Վանտա քաղաքում մասնակցել է աշխարհի առաջնությանը սեղմում հենարանից մրցապայքարում, արժանացել երրորդ մրցանակային տեղի:

Պարտադիր զինվորական ծառայությունն անցնելուց հետո Յուրի Կարոգլանյանը շարունակեց մարզվել: Ծառայության ընթացքում ստիպված էր դադարեցնել մարզական պարապմունքների հաճախելը, քանի որ համադրել ծառայության հետ չէր ստացվում: Ժամանակավոր դադարը բնականաբար լավ չէր ազդել նրա մարզական վիճակի վրա, բայց նպատակասլաց մարզիկը կարողացավ մեկ տարվա մեջ համառորեն մարզվելով՝ վերականգնվել: Առջեւում առաջնություններն էին, որոնց պետք է մասնակցեր մեր հայրենակից մարզիկը:

2021թ. Լիտվայում (Վիլնյուսում) սեղմում հենարանից մրցածեւով մասնակցել է աշխարհի առաջնության, զբաղեցրել 4-րդ տեղ:

2021թ. նոյեմբերի 21-25-ը Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում սեղմում հենարանից մրցածեւով մասնակցելով Եվրոպայի առաջնությանը՝ Յուրի Կարոգլանյանը հռչակվել է չեմպիոն: Եվրոպայի չեմպիոնը վերադարձել է հայրենիք եւ նույն հաջողությամբ մասնակցելով դեկտեմբերի 3-5-ը Հայաստանի Հանրապետության Ուժային եռամարտի առաջնությանը՝ զբաղեցրել է առաջին տեղ: 113 կգ քաշ ունեցող մեր «հսկան» ծանրածողով կքանիստ վարժությունը կատարել է 285,5 կգ քաշով՝ այդպիսով սահմանելով հերթական ռեկորդը:

Սպորտում հաջողության հասնելու համար չեմպիոնը կարեւորում է մարզիկի մեջ նպատակասլացությունը: «Երբեք չպետք է հուսահատվել: Սպորտում լինում է ե՛ւ հաղթանակ, ե՛ւ պարտություն: Պետք է միշտ ձգտել դեպի նպատակ: Եթե մարզիկի մեջ կա նպատակասլացություն, մնացածը կլինի»,- առանձնանշել է Յուրի Կարոգլանյանը:

Յուրին ուսանող է: Սովորում է «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում, իրավաբանության երկրորդ կուրսում: Ուսմանն ու սպորտին զուգահեռ նա նաեւ աշխատում է «Ապագա սերունդների հիմնադրամ»-ի քարի մշակման արտադրամասում:

Չեմպիոն-ռեկորդսմենը մտադիր է առաջիկայում մասնակցել կազմակերպվող գրեթե բոլոր մրցաշարերին: Վերջին տարին է, որ Յուրին կարող է պայքարել 18-23 տարիքային կարգում որպես յունիոր: Նա ուզում է պահն օգտագործել եւ էլի հաղթանակներ ունենալ: Առջեւում մեծահասակների միջեւ պայքարն է, որն ավելի դժվար է: Բայց ուժեղ կամքի տեր ու նպատակասլաց մարզիկի համար բոլոր դժվարությունները հաղթահարելի են: Ասվածի ապացույց է նաեւ այն, որ դեռ լուծված չէ ուժային եռամարտի ֆեդերացիայի մարզադահլիճ ունենալու հարցը: Բարձր ներուժ ունեցող մեր մարզիկները դեռ պարապում են մարզչի սեփականություն հանդիսացող ավտոտնակում, մարզածեւի համար ոչ բավարար պայմաններում: Մարզադահլիճով ապահովելու օգնության դիմումները դրական արձագանք են ստացել, բայց հարցը դեռ չի լուծվել: Մինչդեռ Յուրին եւ իր խմբակիցները շարունակում են պարապել թեկուզ անբարենպաստ պայմաններում ու հաղթանակներ բերել:

Մարզիկի վճռականությունն ու անկոտրում ոգին վստահեցնում են հաղթանակների շարունակականության մեջ: Իսկ պատշաճ մարզադահլիճում չեմպիոնավայել մարզվելու պայմաններ ստեղծելու հարցում, հուսանք, որ աջակցողներ կգտնվեն:

ՄԵԴԻՏԱՑԻԱ

Ֆիզիկական վարժությունների օգնությամբ մարդու մեջ զարգանում են այնպիսի կարեւոր հատկություններ, ինչպիսին են տոկունությունը, ուժը, արագությունը, կամքը: Մինչդեռ բնական վախը, անորոշությունը, հույզերն ու տագնապները հաղթահարելու համար միայն մարմնամարզությունը բավարար չէ. անհրաժեշտ է «մարզել» նաեւ ենթագիտակցությունը: Դա կատարելու լավագույն միջոցներից է մեդիտացիան, որը մարզական աշխարհի ներկայացուցիչներին, մասնավորապես արեւելյան մարտարվեստներ պարապողներին ծանոթ է ոչ միայն դրա մասին լսելով, այլեւ՝ պրակտիկայում կիրառելով: Վերջին շրջանում մեդիտացիայով զբաղվողների թիվը մեր շրջապատում սկսել է աճել, հավանաբար, պայմանավորված նրանով, որ Արցախում լայն թափով են զարգանում արեւելյան մարտարվեստները եւ շատերի համար սիրելի՝ առողջարար յոգան: Քիչ չեն նաեւ այն մարդիկ, ովքեր վարում են ակտիվ կենսակերպ եւ անկախ մարզումներից ու յոգայից, զբաղվում են մեդիտացիով ներքին հանգստության համար: Գուցե եւ մեր կողմից կատարվող մեդիտացիան հիմնովին տարբերվում է ընդունված ձեւերից, գուցե եւ ճիշտ չէ, որ դա նույնպես անվանում ենք մեդիտացիա, համենայն դեպս, ողջունելի է, որ Արցախի բնակիչները նախապատվություն են տալիս առողջ ապրելակերպի շրջանակում բարելավել նաեւ ներքին աշխարհը: Գնալով ավելի ու ավելի արդիական է դառնում առողջ մարմնում առողջ ոգի ունենալը, որն էլ ինքնակատարելագործման ճանապարհի կարեւոր քայլն է:

Ի՞նչ է նշանակում «մեդիտացիա» տերմինը, որը, մեղմ ասած, հայահունչ չէ, ո՞րն է դրա դերը ինքնակատարելագործման մեջ, եւ ինչո՞վ է օգտակար: Սրանք այն հարցերն են, որոնք հաճախ հնչում են մեդիտացիային անծանոթ մարդկանց կողմից: Որոշներն էլ, իմանալով, որ մեդիտացիան բարդ կրոնափիլիսոփայական գործընթաց է, որը ծագել է արեւելյան կրոնների եւ ուսմունքների հիման վրա, հատկապես հետաքրքրվում են, թե արդյո՞ք մեդիտացիան վայել է կատարելու քրիստոնյա մարդուն: Պարզաբանումները կօգնեն գտնել հարցերի պատասխանները:

Նշանակությունը: «Մեդիտացիա» բառը ծագել է լատիներեն «meditatio» բառից, ավելի կոնկրետ՝ «meditari» բայից, որն առանձին ենթատեքստերում ունի «մտորել», «մտովի արարել», «կերտել գաղափարներ» նշանակությունը: Մեդիտացիան ունի կատարման զանազան տեխնիկաներ եւ կարող է համադրվել շնչառական վարժությունների հետ:

Կրոնական շատ ավանդույթներում մեդիտացիան համարվում է հոգեւոր ուսմունքի մաս, որը տարածված է հատկապես բուդդայականության ու հինդուականության մեջ: Յոգայում մեդիտացիան հիմնված է ռելաքսացիայի վրա: Լարվածությունն անցկացնելու համար յոգայով պարապողներն օգտագործում են որոշ ֆիքսված դիրքեր՝ հասանաներ: Մեդիտացիան յոգայի կարեւոր բաղկացուցիչ մաս է:

Սկսած 1960-ական թվականներից, մեդիտացիան սկսեց ավելի ու ավելի շատ ուշադրություն գրավել Արեւմուտքում, դարձավ տարբեր գիտական ուսումնասիրությունների առարկա: Հետազոտությունները ցույց տվեցին մեդիտացիայի եւ օրգանիզմի նյութափոխանակության, արյան շրջանառության, ուղեղի ակտիվության եւ ուրիշ գործընթացների փոփոխության կապը: Ներկայում մեդիտացիան լայնորեն կիրառվում է որպես հոգեթերապեւտիկ միջոց հոգեկան լարվածությունն ու ֆիզիկական ցավն անցկացնելու համար, ինչպես նաեւ՝ որպես սթրեսի հետ պայքարելու, ռելաքսացիայի միջոց:

Մեդիտացիան միայն յոգերի՞ համար է: Հաճախ մենք առնչվում ենք այն կարծրատիպի հետ, որ մեդիտացիան միայն յոգերի համար է կամ էլ այն մարդկանց, ովքեր ուզում են տիեզերքի թաքնված իմաստները բացահայտել: Իրականում այդպիսի պրակտիկաները մեզ համար անտեսանելի ձեւով գոյություն ունեն մեր առօրյա կյանքում: Չէ՞ որ մենք միշտ ձգտում ենք հանգստանալ եւ ծանրացնող մտքերից ձերբազատվել աշխատանքից, պարապմունքներից կամ աշխույժ միջոցառումից հետո: Բայց առավելագույն արդյունավետության հասնելու համար պետք է ծանոթանալ տեխնիկաներին եւ ժամանակ հատկացնել պարապմունքներին:

Խոր իմաստով մեդիտացիան բուդդայականության հոգեւոր ուսմունքների գործիք է, որն օգնում է մաքրել եւ սովորել ղեկավարել գիտակցությունը: Դա թույլ է տալիս հասնել մտքի եւ մարմնի ներքին հանգստության՝ լրիվ գիտակցությամբ եւ ուշադրությամբ: Գոյություն ունեն տարբեր մեդիտատիվ պրակտիկաներ: Որոշներն ուղղված են հանգստության եւ պահի ընթացքին դիտելուն՝ առանց որեւէ գնահատական տալու դրան: Մյուսներն ունեն կոնկրետ օբյեկտ մտքերի եւ զգացողությունների տեսքով ու հաճախ ուղեկցվում են վիզուալիզացիաներով: Այդ մեդիտացիաների նպատակը ոչ միայն գիտակցության կառավարումն է, այլ նաեւ՝ մեր ներքին էներգիան ղեկավարելը:

Եթե մեդիտացիան դիտարկենք ավելի աշխարհիկ տեսանկյունից, ապա նրանց համար, ովքեր վարում են ակտիվ կյանք, պրակտիկաները կարող են դառնալ ֆիզիկապես եւ էմոցիոնալ վերականգնվելու համար ռեսուրս: Դա կատարվում է մկանների խորապես հանգստանալու եւ մտքերի ու հույզերի հանգստության հասնելու հաշվին: Բացի դրանից, մեդիտացիան ընդունակ է բարելավել ուշադրությունն ու կազմակերպվածությունը մրցաշարերի եւ մարզումների ժամանակ, ինչն էլ դրական է ազդում արդյունքի վրա:

Հին Ճապոնիայում կատարելագործված մարտիկ էին համարվում նրանք, ում համար մարտի ժամանակ գոյություն չունի ո՛չ անցյալ, ո՛չ ապագա: Թե ինչ է դա նշանակում, կարելի է բացատրել սովորական օրինակով: Պատկերացրեք հետեւյալ իրադրությունը. մարդը բարակ գերանի վրայով անցնում է անդունդով: Եթե նա մտովի տեղափոխվի անցյալը, կհիշի, որ մինչեւ իրեն ինչ-որ մեկն ընկել է բարձրությունից եւ մահացել կամ դարձել հաշմանդամ: Եթե մտածի ապագայի մասին, կհասկանա, որ նույնը կարող է իր հետ կատարվել: Այս մտքերը կառաջացնեն վախ, որը կկաշկանդի նրա շարժումները, կցրի կենտրոնացվածությունը, կխանգարի համարձակորեն հաղթահարել խոչընդոտները:

Սովորական առօրյան չի կարելի համեմատել մարտի հետ, բայց այնուամենայնիվ, մենք էլ անընդհատ պայքարում ու պայքարում ենք մե՛րթ շրջապատող մարդկանց, մե՛րթ մեր կյանքի դաժանությունների, մե՛րթ հիվանդությունների, իսկ շատ հաճախ էլ՝ ինքներս մեր դեմ: Մեր ուղեղի կենտրոնը սովորաբար հանգստանում է միայն քնի ժամանակ, երբ բնությունն ազատում է մեր ծայրահեղ կարեւոր օրգանն ամենասովորական թվացող խնդիրներից: Հաճախ առօրյա հոգսերն ու գերլարվածությունն այնքան են ծանրաբեռնում մեր ուղեղը, որ անհրաժեշտ է լինում բեռնաթափել այն նաեւ արթուն վիճակում, այլապես ճգնաժամն անխուսափելի է դառնում: Դրա համար էլ ոչ միայն մարտի ժամանակ, այլեւ առօրյայում անհրաժեշտ է հոգեկանն ազատել վախից, զայրույթից, դաժանությունից, հասնել լրիվ հավասարակշռության եւ հանգստության: Մեդիտացիան նպաստում է հենց դրան՝ օգնելով կարգավորել մտքերը: Նրանք, ովքեր պարբերաբար զբաղվում են մեդիտացիայով, զգալիորեն ընդլայնում են իրենց գիտակցությունը եւ իրականության ընկալման սահմանները: Պարզ ասած՝ մարդիկ ավելի վառ են ապրում, երջանկությունը զգում են ավելի ուժեղ եւ ավելի հաճախ,

ԵՐԿԷՋ

ՍՊՈՐՏ ԵՎ ԻՄՈՒՆԻՏԵՏ

Հանրապետությունում դիտվող սուր շնչառական վարակների աշխուժացմամբ պայմանավորված՝ քաղաքացիների մոտ զգալի անհանգստություն է առաջ եկել: Մասնավորապես այս շրջանում են վերհանվում այն հարցերը, որոնք կապված են իմունային համակարգի ուժեղացման հետ: Ինչպե՞ս պաշտպանվել եւ ունենալ ամուր իմունիտետ: Մինչդեռ սպասել պետք չէ, այլ պետք է օգտագործել մեր թանկագին ժամանակի որոշ մասը առողջ կյանքի համար մեծ նշանակություն ունեցող տարրի՝ իմունային համակարգի ուժեղացմամբ զբաղվելով: Հազվադեպ են հանդիպում մարդիկ, ովքեր ունեն բնատուր ամուր իմունիտետ: Հիմնականում բոլորը պետք է զբաղվեն դրա ուժեղացմամբ ողջ կյանքի ընթացքում, մշտապես զարգացնեն ու պահպանեն, որպեսզի անհրաժեշտ պահին իմունային համակարգը դիմանա եւ չձախողի առողջությամբ պայմանավորված մեր ծրագրերը:

Հայտնի է, որ առողջ կենսակերպն ու ֆիզիկական ծանրաբեռնվածությունն անմիջական ազդեցություն ունեն ոչ միայն ընդհանուր օրգանիզմի, այլեւ իմունիտետի վիճակի վրա: Տրամաբանական է, որ ինչքան մարդը առողջ է եւ ֆիզիկապես պինդ, այնքան ավելի քիչ է հակված տարբեր հիվանդություններով հիվանդանալու կամ վարակներով վարակվելու: Որքան էլ «ծեծված» է հնչում թեման, այնուամենայնիվ, հետաքրքիր է պարզաբանել, թե ինչ դեր ունի սպորտը իմունիտետի բարձրացման մեջ: Արդյո՞ք հնարավոր է մարզումների միջոցով ուժեղացնել իմունիտետը:

Գիտնականների կողմից կատարված հետազոտությունների համաձայն՝ այն մարդկանց մոտ, ովքեր օրվա մեջ քնում են վեց ժամից պակաս, պատվաստման արդյունավետությունը նվազում է՝ լիարժեք եւ առողջ քուն ունեցող մարդկանց համեմատ: Ինչ վերաբերում է սպորտին, ապա Հարավային Կարոլինայի համալսարանի գիտնականների կատարած հետազոտությունն է ուշագրավ, որը կատարված է եղել 547 հասուն մարզիկների հետ: Գրիպի տարածման եւ հիվանդանալու բուռն շրջանում եւ ցուրտ սեզոնի սկզբին ինֆեկցիաներով 20 տոկոսով քիչ էին վարակվում հենց նրանք, ովքեր պարբերաբար մարզվում էին, բայց՝ չափավոր ռեժիմով: Այսինքն՝ պետք է շատ քնել, բայց չափավոր մարզվել:

Հոնկոնգյան հետազոտությունները ցույց են տվել, որ քիչ եւ միջին ծանրաբեռնվածությամբ մարզումները հանգեցնում են հետգրիպյան բարդացումներով պայմանավորված մահերի թվի նվազեցմանը: Այն մարդիկ, ովքեր մարզվել են ամսվա մեջ մեկ անգամից մինչեւ շաբաթական երեք անգամ, ունեցել են մահվան ավելի ցածր ցուցանիշներ, քան նրանք, ովքեր երբեք կամ հազվադեպ են մարզվել:

Պարադոքսն այն է, որ ունեցած տվյալների համաձայն սպորտով պարապելու ինտենսիվությունը չպետք է բարձր լինի: Գիտնականները դեռ չեն գտել այն հարցի հստակ պատասխանը, թե ինչու են ինտենսիվ ծանրաբեռնված մարզումները ճնշում իմունիտետը: Ենթադրություն կա, որ չափավոր մարզումները խոչընդոտում են մրսածությամբ հիվանդանալուն, իսկ չափից դուրս երկարող կամ ծանր պարապմունքները ճնշում են օրգանիզմի իմունային պատասխանը: Ինչքան ծանր ու տեւական է մարզումը, այնքան ավելի երկար է ճնշվում օրգանիզմի իմունային պատասխանը: Պարզ ասած՝ երբ վիրուսը մտնում է օրգանիզմ, սկսում են արտադրվել իմունային բջիջներ, որոնք հանդիսանում են օրգանիզմի պաշտպանական առաջին գիծը՝ առաջ բերելով բորբոքում եւ ուրիշ փոփոխություններ օրգանիզմում: Որպեսզի բորբոքման ռեակցիան չտեւի շատ երկար եւ չվնասի մարդուն, իմունային համակարգն օգտագործում է բջիջների այլ տիպ, որոնք «հանգցնում» են անցանկալի երեւույթները: Հենց դրա համար էլ այս կոնցեպցիայի կողմնակիցները ճիշտ են համարում, որ պետք է օրգանիզմին տալ չափավոր ծանրաբեռնվածություն (թեթեւ վազք, քայլք) թեթեւ մրսածության դեպքում, երբ բացակայում են բարձր ջերմությունը, գլխացավը եւ ընդհանուր թուլությունը: Ավելի շուտ դա օգնում է լավ զգալուն: Մինչդեռ ծանր մարզումը հանգեցնում է երկու տիպի բջիջների անհերդաշնակության եւ իմունային կայուն պատասխանի խախտման:

2016թ. Բրազիլիայի եւ ԱՄՆ մի խումբ գիտնականներ ապացուցել են, որ երկու օր անընդմեջ տեւող ինտենսիվ պարապմունքներն իջեցնում են իմունիտետը: Հետազոտվողների մոտ ուժային+մարմնամարզություն+կարդիո պարապմունքից հետո զգալիորեն իջել է հակաբորբոքային ցիտոկինների պարունակությունը: Վերլուծաբանները խորհուրդ են տալիս ծանր պարապմունքից հետո մեկ օր հանգստանալ, իսկ առավել օգտակար են համարվում միջին եւ ծանր ծանրաբեռնվածությամբ՝ 60 րոպե տեւողությամբ մարզումները: Այդ պայմաններում են ակտիվ շրջանառվում ցիտոկինները, ինչն էլ բարձրացնում է իմունիտետը:

Իսկ դուք ինչպե՞ս եք ուժեղացնում ձեր իմունային համակարգը: Գոյություն ունեն բազմաթիվ զանազան մեթոդներ, մարտավարություններ, թե ինչպես օգնել օրգանիզմին պայքարելու եղանակի փոփոխությամբ կամ սեզոնային վարակներով պայմանավորված հիվանդություններով չհիվանդանալու հարցում: Բոլոր դեպքերում առողջ ապրելակերպի ընդունումը (ճիշտ սնվել, պարբերաբար մարզվել, կարողանալ հաղթահարել սթրեսները) համարվում է առաջին քայլը եւ խթանում է իմունային համակարգի լավ վիճակ ունենալուն:

Պահպանե՛ք ճիշտ սննդակարգի եւ քնի նորմերը, հաղթահարե՛ք եւ մի՛ տրվեք սթրեսներին, մարզվե՛ք չափավոր եւ եղե՛ք առողջ:

քանի որ ունակ են տեսնելու դա ամենասովորականի մեջ: Պարապմունքները հնարավորություն են տալիս ընդունել եւ բաց թողնել բացասական հույզերն ու զգացմունքները՝ մնալով ներդաշնակ:

Ինչպե՞ս կատարել: Մեդիտացիայի կատարման տեխնիկաներն ընտրելն անհատական է, կախված անձնական նախապատվություններից: Կարելի է կատարել ինչպես աչքերը բաց, այնպես էլ փակ վիճակում: Դրանով զբաղվել կարելի է նստած, կանգնած, պառկած եւ նույնիսկ քայլելիս: Մեդիտացիայի դասական տարբերակը կատարվում է նստած վիճակում, սակայն շատերը թյուրիմացաբար համարում են, թե լոտոսի դիրքը պարտադիր եւ անփոխարինելի է որպես մեդիտացիայի դիրք: (Հնդկաստանում լոտոսի ծաղիկը մաքրության եւ զարգացած գիտակցության խորհրդանիշ է:) Իրականում այն բոլորի համար չէ հարմար: Ամենագլխավոր պայմանը ողնաշարը ուղիղ պահելն է, իսկ կրծքավանդակը՝ ազատ, որպեսզի շնչառությանը խանգարող բան չլինի: Մարմինը պետք է հանգիստ եւ թուլացած պահել, չլարվել: Սկսնակները կարող են նստել ու հենվել աթոռին, փակել աչքերը: Իսկ հետո ուղղակի շնչել, թուլացնել մկանները մեկը մյուսի հետեւից եւ բաց թողնել մտքերը: Շնչառության տեմպը պետք է հարմար լինի կատարողի համար: Շնչելիս որքան հնարավոր է, շատ թթվածին տանել դեպի որովայն ու դանդաղ արտաշնչել: Շնչառությանը հետեւել այնքան, մինչեւ որ դառնա հանգիստ եւ համաչափ: Շնչելիս եւ արտաշնչելիս չպետք է լարվել, չպետք է երկար կամ խորը շնչել ու արտաշնչել, եթե դա անհարմարություն է առաջացնում: Չէ՞ որ մեդիտացիան մարմնավորում է սերը եւ հոգատար վերաբերմունքը մարմնիդ եւ ինքդ քո հանդեպ, այլ ոչ թե հալածանքը:

«Բաց թողնել մտքերը» արտահայտությունը հասարակ է հնչում, բայց դա անելն այդքան էլ հեշտ չէ: Այդ բարդ հմտությունը ձեռք է բերվում փորձի հետ: Պետք է հիշել, որ առաջին անգամ գլուխը լցվում է տարբեր երեւակայությամբ եւ հիշողություններով, որոնք շեղում են հանգստանալու գործընթացից: Դա նորմալ է: Պարզապես պետք է

ամեն անգամ ուշադրությունը սահուն կերպով կենտրոնացնել սրտի եւ շնչառության վրա: Կարեւոր է մտովի պատկերացնել, որ մտնում ենք սրտի մեջ՝ մուտքի մոտ թողնելով տագնապներն ու հույզերը: Չպետք է մտածել, թե վատ է ստացվում կամ չի ստացվում: Այդպես էլ պետք է լինի, ուղեղը չի կարող դատարկ լինել, այն հղկված է անընդհատ մտածելուն: Ժամանակի ընթացքում հնարավոր է սովորել հանգիստ վիճակում լինել՝ անկախ եկող եւ գնացող մտքերից: Պետք է սկսել կարճ տեւողությամբ պարապմունքներից՝ 3-5 րոպե: Սկսնակները կարող են շուտ ձանձրանալ եւ որպես արդյունք՝ մեդիտացիան սկսել ոչ այնքան հաճույքով, իսկ հետո չուզեն էլ շարունակել: Միջինում փորձառու կատարողները կիրառում են 10-15 րոպե տեւողությամբ մեդիտացիաներ, բայց դա էլ չէ գագաթնակետը: Օրվա ժամը պետք է ընտրել անձնական զգացողությամբ: Ոմանք նախընտրում են առավոտյան մեդիտացիաները. լիցքավորվել եւ սկսել օրը: Ոմանց հարմար է երեկոյան. աշխատանքից հետո հանգստանալ եւ մաքրվել ավելորդ ինֆորմացիայից: Մարզումների ժամանակ կատարվող մեդիտացիայի համար նույնպես հստակեցված ժամանակ չկա, կարելի է ինչպես պարապմունքի սկզբում, այնպես էլ վերջում՝ կախված մարզչի հայեցողությունից: Գլխավորը հարմարավետությունն է, հանգստությունն ու ներդաշնակությունը, որոնց հասնելու համար էլ օգտագործվում են մեդիտացիաները: Այս պարզ սկզբունքները պահպանելով ու վանելով մեզանից ցանկացած բացասական հույզ, չար միտք, հոգս՝ հասնում ենք իսկական հանգստության եւ անդորրի:

Մեդիտացիան եւ քրիստոնեությունը: Հասնել կատարյալ հանգստության եւ ինքնակատարելագործվել. առաջին հայացքից այս սկզբունքները, կարելի է ասել, համընկնում են քրիստոնյա մարդու գաղափարական ընկալման հետ: Սակայն քրիստոնյա մարդը նախքան մեդիտացիայով զբաղվելը պետք է հաշվի առնի կարեւոր դրույթներ: Թեմային նվիրված ընդհանուր սեմինարի ժամանակ Հռոմի Պապ Նորին Սրբություն Ֆրանցիսկոսը մեդիտացիան դիտարկել է որպես քրիստոնեական աղոթքի սահմաններից մեկը: «Քրիստոնյայի համար մեդիտացիա անելը նշանակում է ձգտել սինթեզի,- պարզաբանել է Հայր Ֆրանցիսկոսը,- այսինքն՝ հայտնվել Արդարության հզոր էջի առջեւ եւ դարձնել այն իրենը՝ լրիվությամբ կլանելով իր մեջ: Երբ մենք ընդունում ենք Աստծո Խոսքը, այդ Խոսքը պետք է հանդիպի ուրիշ գրքի հետ, այսինքն՝ մեր կյանքի գրքի հետ: Դրանում է կայանում մեդիտացիայի էությունը»: Սուրբ Հայրը նշել է, որ վերջին շրջանում մեդիտացիան ավելի արդիական է դարձել, դրա մասին խոսում են ոչ միայն քրիստոնյաները, այլեւ աշխարհի գրեթե բոլոր կրոններում, ինչպես նաեւ մեդիտացիան տարածվել է նաեւ նրանց շրջանում, ովքեր կրոնական հայացքներ չեն կիսում: Դա բացատրվում է նրանով, որ բոլոր մարդիկ կարիք ունեն մտորելու, իրենց գտնելու, իսկ մեդիտացիան դառնում է առօրյա սթրեսներն ու ունայնությունը հաղթահարելու միջոց: Մինչդեռ քրիստոնեության ենթատեքստում մեդիտացիան ունի այլ յուրահատկություն: Մկրտված մարդու աղոթքը միայն մեկ դռնով է անցնում՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Այս ուղիով է գնում նաեւ մեդիտացիան: Երբ քրիստոնյան աղոթում է, չի ձգտում թափանցել ինքն իր մեջ, չի փնտրում սեփական ես-ի գաղտնախորհուրդ միջուկը: Այդ ամենը թույլատրելի է, սակայն քրիստոնեական աղոթքի գլխավոր չափանիշը հանդիպումն է Այլին՝ տրանսցենդենտ հանդիպումն Աստծո հետ: Եթե աղոթքը հասցնում է ներքին խաղաղության, ինքնակառավարման կամ պարզության, կարելի է ասել, որ դրանք քրիստոնեական աղոթքից ստացած բարիքներն են, որը կայանում է Հիսուսի հետ հանդիպման մեջ: Այդ հանդիպումը իրականանում է Սուրբ Գրքի բառերի վրա մտորելու շնորհիվ: «Մեդիտացիա» բառը պատմության ընթացքում ինքնին ձեռք է բերել տարբեր նշանակություն: Քրիստոնեության մեջ այն եւս նշանակում է զանազան հոգեւոր պարապմունքներ, որոնք հիմնված են տարբեր մեթոդների վրա: Մի մեթոդը կարող է շեշտը դնել անձի ինտելեկտուալ չափորոշիչների վրա, մյուսները՝ ավելի շատ հույզերի եւ զգացմունքների վրա: Բոլոր մեթոդներն իրենց կշիռն ունեն, քանի որ կարող են մարդուն ներգրավել հոգեւոր փորձի մեջ: Մինչդեռ մեթոդը պարզապես ճանապարհն է, բայց ոչ վերջին կետը: «Չի կարելի կանգ առնել ճանապարհին եւ այն համարել նպատակ՝ իբր թե աստվածացնելով հենց ճանապարհը,- ընդգծել է Սուրբ Հայրը: - Այդ ճանապարհով մեզ տանում է Սուրբ Հոգին: Չի կարող լինել քրիստոնեական մեդիտացիա առանց Սուրբ Հոգու, եւ հենց Նա է հասցնում հանդիպմանը Հիսուսի հետ: Կտակարանում չկա այնպիսի էջ, որի վրա տեղ չլինի մեզ համար: Մեզ՝ քրիստոնյաներիս համար մեդիտացիան Հիսուսին հանդիպելու ձեւ է, եւ միայն այդպես կարելի է գտնել ինքն իրեն», - եզրափակել է Սուրբ Հայրը:

Երկէջը՝
Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Խմբագրության կողմից

Լուսանկարում «Լուսարար»-ի մարզական նյութերի հեղինակ Սոնյա Ավագյանն է:

ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԸ ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ նախորդ համարում

Համամ Արևելցին (Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ, Համամ-Գրիգոր) ծնվել է մոտ 9-րդ դարի կեսին, ապրել և գործել է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսի (877-897) օրոք: Բագրատունիների կամ Առանշահիկների ազնվական տոհմից է, հիշատակվում է որպես իշխանաց իշխան (882-883), նաև թագավոր Հայոց արևելից կողմանց (894-895):

Համամը արաբ ոստիկան Բուղայի հարկադրանքով, ինչպես ինքն է հաստատում նաև իր շարականում, սպանել է կրտսեր եղբորը, ինչի համար զղջական երգ է գրել՝ Համամ ծայրակապով: Համամի մասին վկայություն է թողել նաև «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակը. «Համամը, աստծու նկատմամբ գործած մեծամեծ հանցանքների պատճառով, որը այս փուչ կյանքի համար իր եղբոր արյան պարտքը իր վրա էր առել, ուրախությամբ ու անընդհատ մեծամեծ բարեգործություններ կատարեց եկեղեցու բոլոր կարոտյալների ու չքավորների հանդեպ. նաև հայոց մեծ հայրապետ Գևորգին ազատել տվեց անօրեն արաբների բանտից, մեծ գանձեր նվիրելով և նրան բազմաթիվ մեծարանքներ ցույց տալով՝ ողջ-առողջ Հայաստան ուղարկեց»: [47]

Ըստ **Հովհաննես Դրասխանակերտցու՝** Համամը 894թ. Ափշինի գերությունից փրկագնել է Գևորգ Բ Գառնեցի կաթողիկոսին. «Սմբատ արքայի հրամանով անմիջապես ուղևորվեցինք արևելքի մեծ իշխան Համամի մոտ: Քանի որ ոստիկանը այդ ժամանակ հասել էր Փայտակարան քաղաքը՝ իր հետ տանելով մեծ կաթողիկոսին, և այնտեղ ժամանելիս մերոնք շտապ հասան նրան: Իսկ նա [Համամը] խնդրում է իրեն տալ հայրապետին և առնում է: Նա ուղարկված գանձի վրա ավելացնում է նաև իրենը ու տալիս է տանելու ոստիկանին»: [48]

Համամ Արևելցին նշանավոր դեմք է Հայոց արևելից կողմանց պատմության մեջ. նա կառուցել է Հավքախաղաց բերդը Տրտուի աջ ափին, տիրել է Արցախ-Խաչեն աշխարհին և 9-րդ դարում արաբների դեմ մղված պայքարին ակտիվ մասնակցություն ունեցել Առանշահիկների Եսայի Ապումուսե իշխանի նման: Հայոց արևելից կողմանց թագավորությունն ընդգրկել է Արցախի, Ուտիքի, Կամբեճանի ողջ տարածքը: Համամ Արևելցին խաղաղարար դեր է կատարել հայոց և աղվանից եկեղեցիների միջև առկա տարաձայնությունների հարթեցման գործում:

Պահպանվել են Համամի 2 արձանագրությունները. մեկը՝ Մեծ Մազրայում 881-ին կանգնեցված խաչարձանի վրա, մյուսը՝ «Համամ» անունով և առանց թվագրության, Տիգրանակերտի ավերակների մոտ գտնվող Դաշտային Արցախի Սոֆուլու գյուղի մոտակայքում:

Արցախի Տիգրանակերտ քաղաքի մոտակայքում պահպանված դամբարանագիրը նվիրված է Համամի կրտսեր եղբորը, ով սպանվել է Համամի կողմից՝ արաբ ոստիկան Բուղայի դրդմամբ. «Մահապատժի մասին են վկայում նաեւ 4-րդ տողում արձանագրված խոսքերը՝ իրենց առանձնահատուկ արգելական շեշտադրումով: Մեզ է հասել նաեւ անվավեր մի շարական՝ նույնպես վերագրված Համամին (այդ մասին է վկայում նաեւ շարականի ծայրակապը՝ Համամ), որտեղ շարականի հեղինակ համարվող Համամը զղջում եւ ապաշխարում է սեփական եղբոր արյունը թափելու համար: Համամի կյանքի այս կարեւոր պատումը, հիմնված վերոնշյալ երկու վկայությունների վրա, ենթադրաբար ներկայացնում է նրա կյանքի հետագա մանրամասները: Ըստ այսմ՝ Համամը, զղջալով եւ ապաշխարելով, ընդունում է վանական սքեմ՝ Հովհաննես անունով, եւ կյանքի մնացած մասն անցկացնում վանքում»: [49]

Այդ շարականը, որ վաղուց դարձել է պարականոն, տպագրել է Պողոս Խաչատրյանը «Գանձարան հայ հին բանաստեղծության» գրքում՝ «Շարական Համամայ» վերնագրով, այն արևելահայերենի ենք փոխադրել մենք.

Հայր երկնաւոր,
Անկանիմ առաջի անոխակալ քո գթութեանդ,
Զի մեղօք իմովք բարկացուցի
Եւ չար առաջի քո արարի.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,
Որ միայնդ ես ողորմած:
Արք անօրէնք կոչեցին զիս հաղորդիլ արեան մահու.
Գնացի զճանապարհս ձախակողմանն,
Կատարեցի զչար խորհուրդ նոցա.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,
Որ միայնդ ես ողորմած:

Մեծ են յանցանք իմ, Տէր,
Զոր գործեցի յահէ մահու
Հրամանաւ իսմայելեան բռնաւորին,
Երագեցի յեղուլ զարիւն եղբօրն.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,
Որ միայնդ ես ողորմած:

Աստուած ապավեն և յոյս դարձելոյս ի քեզ,
Յարենէ փրկեա՛ զիս, Տէր.
Որպէս թողեր զայն երգողին,
Թո՛ղ եւ ինձ զպարտս մեղուցեալ քո ծառայիս.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,
Որ միայնդ ես ողորմած:

Մեղա՛յ, Տէր, մեղա՛յ,
Մանասէին ձայնիւ գոչեմ,
Ընկա՛լ զիս, մարդասէր, ընդ երանելեացն,
Որոց թողան եւ ծածկեցան յանցանքն.
Աղաչեմ զքեզ, ներեա՛ յանցանաց իմոց,
Որ միայնդ ես ողորմած:

Հայր երկնավոր,
Ակնկալում եմ անոխակալ քո գթությունը,
Զի իմ մեղքերով բարկացրի
Եվ չարիք գործեցի քո առջև.
Աղաչում եմ քեզ, ների՛ր իմ հանցանքները,
Միայն դու ես ողորմած:
Անօրեն մարդիկ ինձ հարկադրեցին հաղորդվել մահու արյան.
Գնացի ձախակողմ ճանապարհով,
Կատարեցի նրանց չար խորհուրդը,
Աղաչում եմ քեզ, ների՛ր իմ հանցանքները,
Միայն դու ես ողորմած:

Մեծ են իմ հանցանքները, Տե՛ր,
Որ գործեցի մահվան ահից
Հրամանով իսմայելյան բռնավորի,
Շտապեցի թափել իմ եղբոր արյունը.
Աղաչում եմ քեզ, ների՛ր իմ հանցանքները,
Միայն դու ես ողորմած:

Աստվա՛ծ, ապավենն ու հույսն ես դեպի քեզ դառնալուս,
Արյունից փրկի՛ր ինձ, Տե՛ր.
Ինչպես ներեցիր այն երգողին,
Ների՛ր և իմ՝ քո ծառայի գործած մեղքերը.
Աղաչում եմ քեզ, ների՛ր իմ հանցանքները,
Միայն դու ես ողորմած:

Մեղա՛, Տե՛ր, մեղա՛,
Մանասեի ձայնով եմ գոչում,
Ընդունի՛ր ինձ, մարդասե՛ր, այն երանելիների հետ,
Որոնց հանցանքները ներվեցին.
Աղաչում եմ քեզ, ների՛ր իմ հանցանքները,
Միայն դու ես ողորմած:

Ինչպես նկատել է Հ. Բախչինյանը, «Համամ Արեւելցու այս երգը նորություն է հայ բանաստեղծության մեջ, քանի որ առաջին անգամ արծարծում է անձնական թեմատիկան: Հենց այս պատճառով էլ այն միառժամանակ ընդգրկվելով կանոնական Շարակնոցի մեջ, շատ չանցած դարձել է պարականոն: Պատճառն ավելի քան պարզ է: Օրհներգերում զղջական-ապաշխարական խոսքը ասվել է պաշտող համայնքի կամ այն մարմնավորող ընդհանրական ես-ի կողմից՝ առհասարակ մարդկային մեղքերի համար: Իսկ խնդրո առարկա երգում ապաշխարանքը կոնկրետացված-անձնավորված է, քանի որ արված է կոնկրետ անձի որոշակի մեղքի համար: Սա շեղում է օրհներգական ավանդույթից, բայց նորույթ ու նորամուծություն էր միջնադարի հայ քերթության մեջ»: [50]

Համամ Արևելցու անունով մեզ է հասել հարուստ մատենագրական ժառանգություն՝ «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն Սաղմոսին, որ է Ամբիծք», «Մեկնութիւն Առակացն Սողոմոնի», Հոբի ԼԸ գլխի մեկնությունները: Համամը գրել է նաև մի պատմագրական երկ, որը համարվում է կորած: Համամի անունով պահպանվել է նաև Դիոնիսիոս Թրակացու քերականական մի մեկնություն, որը տպագրել է Նիկողայոս Ադոնցը Դիոնիսիոս Թրակացուն նվիրված իր աշխատության մեջ: [51]

Համամը հեղինակ է նաև «Կարգաւորութիւն Սաղմոսաց» խորագրով երաժշտաբնագրագիտական բնույթի մի աշխատության՝ եկեղեցական ծեսի մեջ սաղմոսների կիրառման սահմանների ճշգրտման և երաժշտական կարգավորման մասին:

Համամ Արևելցու մահվան թվականը ստույգ հայտնի չէ: Կնոջ հետ թաղված է Արցախի Վարանդա գավառի Ավետարանոց՝ այժմյան Ասկերանի Ավետարանոց գյուղում, որը ևս, ցավոք, դավադրաբար հանձնեցին Ադրբեջանին:

10-րդ դարի պատմիչ **Մեսրոպ Վայոցձորեցին** Մեսրոպյան Գահնամակում հիշատակում է ոչ միայն իշխանական տների անունները, այլ նաև երկրորդական գահերը, որոնց տերերն իրավունք ունեին ներկա լինելու թագավորական խնջույքներին: Ըստ այդ Գահնամակի՝ Արշակունի թագավորի խնջույքի սեղանին՝ 71-րդ բարձին, կարող էր բազմել **Փառճունի կամ Ռաճունի ազնվական տան իշխանը, որ Մեծ Հայքի Արցախ նահանգի Փառիսոս** (Քուստ-ի-Փառնես, Փառնես, Քուստի) գավառի իշխան էր: Նույն Գահնամակի 138-րդ բարձին բազմելու պատիվը **Խաչյան** ազնվական տան իշխանինն է, որ Մեծ Հայքի Արցախ աշխարհի **Խաչեն (Մեծիրանք, Մեծ Առանք) գավառի իշխանն է**: Նույն Գահնամակի 139-րդ բարձին բազմելու իրավունքը **Խաղբյան** ազնվական տոհմինն է: Մեծ Հայքի Սյունիք նահանգի **Հաբանդ** գավառը անվանվել է նաև **Խաբան,** իսկ Մեծ Հայքի Արցախ նահանգի **Մյուս Հաբանդ գավառը՝ Խաբանդ**: **Խաղբյանները** հենց Հաբանդ գավառի տերերն էին, ովքեր Արցախի Առանշահիկ նախարարական տանից էին, որոնցից ծագել էին Խաղբակյանները, որոնց ժառանգները Պռոշյան իշխաններն էին:

Ուրեմն ըստ Վայոցձորեցու՝ դեռևս 4-րդ դարում Արցախում եղել են Արշակունի թագավորի խնջույքի սեղանին մասնակից լինելու պատվի արժանի իշխաններ՝ Փառճունի, Խաչյան, Խաղբյան ազնվական տներից:

10-րդ դարում Մովսես Կաղանկատվացու պատմությունը շարահարել է Մովսես Դասխուրանցին, որ կրկին Մեծ Հայքի Ուտիք նահանգի Առանձնակ Ուտիք գավառից է, որտեղ գտնվել են Կաղանկատուքը և Դասխուրանը:

Ամփոփենք, հայ հին գրականության էջերում՝ դեռևս 4-րդ դարում Արցախը հիշատակված է եղել որպես «ամուր գաւառն» և ըստ Փավստոսի վկայության՝ Հայոց սահմանը արևելքում եղել է Կուր գետը: Պարտավ քաղաքը, որը գտնվել է այժմյան Ադրբեջանի Բարդա քաղաքից 5-6 կմ դեպի հյուսիս-արևմուտք, 9-րդ դարում Անանուն Զրուցագրի կողմից անվանվել է Հայոց արևելյան սահմանին գտնվող քաղաքավան:

4-րդ դարում արցախյան Փառճունի, Խաչյան, Խաղբյան ազնվական տան իշխանները պատիվ են ունեցել մասնակից լինելու Արշակունի թագավորի խնջույքի սեղանին՝ համաձայն Մեսրոպյան Գահնամակի: Մովսես Խորենացու կողմից Փոքր Սյունիք անվանված Արցախի Ամարասի վանքում, որը կառուցել է տվել Գրիգոր Լուսավորիչը, 338թ. թաղվել է վերջինիս որդին՝ Գրիգորիսը:

5-րդ դարում քրիստոնեություն քարոզելու նպատակով Մեսրոպ Մաշտոցն այցելել է նաև Արցախ ու Աղվանք՝ այնտեղ բացելով դպրանոցներ:

Ըստ 5-րդ դարում գրված և 7-րդ դարում խմբագրված «Աշխարհացոյց»-ի՝ Արցախ աշխարհը եղել է Մեծ Հայքի 15 նահանգներից մեկը՝ 12 գավառներով:

Արցախը՝ որպես հայոց աշխարհի մաս, հիշատակել են նաև պատմիչներ Փավստոսը, Եղիշեն, Մովսես Խորենացին, Սեբեոսը, Մովսես Կաղանկատվացին, Ղևոնդը, Անանուն Զրուցագիրը, Մովսես Դասխուրանցին:

6-րդ դարում Արցախում գործել են Վաչագան Բարեպաշտ Աղվանից արքան և վերջինիս հետ գործակցած հոգևորականներ Մատթե Գիտնավորը, Պարտավի Շուփհաղիշո արքեպիսկոպոսը, Կապաղակի Մանասե եպիսկոպոսը, Հունան, Անանիա, Սահակ եպիսկոպոսները, Ուտիքի Փոդ եպիսկոպոսը, Կաղանկատուքի երեց Հովսեփը, Պարտավի երեց Մատթեն, թագավորի դռան երեց Թոման, Գայեգուճի երեց Պողոսը, Ցրիի քորեպիսկոպոս Շմավոնը, Դարահոճի երեց Մատթեն, Բեթի երեց Աբիկազը, Մանուչեի երեց Ուրբաթայրը, Հովել, Պարմիդե և Հակոբ երեցները, Կաղանկատուքի նահապետ Բակուրը:

Որպես Արցախում գործած գրողներ հայ հին գրականության մեջ հիշատակվել են 7-րդ դարում Դավթակ Քերթողը, Մովսես Կաղանկատվացին, Գրիգորատուր Վարդապետը, Հովսեփ Բրտիայրեցի Անապատականը, 9-րդ դարում՝ Եսայի Ապումուսե Արցախի իշխանը, Համամ Արևելցին, 10-րդ դարում՝ Մովսես Դասխուրանցին, որոնք իրենց ստեղծագործությամբ հարստացրել են հայ հին գրականության գանձարանը:

Հայ հին գրականության մեջ Արցախի և արցախցիների մասին հիշատակությունները Մեծ Հայքի Արցախ աշխարհի հայկականության մասին հնագույն անհերքելի ապացույցներ են:

---

47. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն աղվանից աշխարհի, էջ 262-263:

48. Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ. Բ. Թոսունյանի, Ե., 1996, էջ 175:

49. Շ. աբեղա Անանյան, Համամ Արևելցի՝ թագավո՞ր, թե՞ մատենագիր, Էջմիածին, 2011, մարտ:

50. Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Ե., 2012, էջ 140:

51. Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915

Վանո ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հեղինակը հոդվածը գրել է հատուկ «Լուսարար»-ի համար, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

ԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՆՈՖՈՆԴՆ ՈՒՆԻ ԱՎԵԼԻ ՔԱՆ 6000 ՏԱՐՎԱ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում իրականացվել է Հայկական լեռնաշխարհի և Բալկանների հնագույն և ժամանակակից ԴՆԹ նմուշների ամբողջական գենոմների համեմատական վերլուծություն: Այն ցույց է տվել, որ հայերը տարբերվում են Բալկանների հնագույն և ժամանակակից բնակչությունից՝ հերքելով հայ ժողովրդի ծագման վերաբերյալ պատմագիտության մեջ գերակշռող տեսություններից մեկը համարվող «բալկանյան վարկածը»: Հետազոտություններն ուղղված են Հայկական լեռնաշխարհի բնակչության գենետիկական շարունակականության վերականգնմանը, հայկական գենոֆոնդի քարտեզագրմանը և իրականացվել են Քեմբրիջի, Կոպենհագենի, Տարտուի համալսարանների, ինչպես նաև Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ համագործակցությամբ:

Գիտական աշխատանքների ղեկավար, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էվոլյուցիոն գենոմիկայի լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը նշեց. «Հայկական լեռնաշխարհում հայերի նախնիների բնիկության կամ եկվորության հարցը վաղուց ի վեր բուռն բանավեճերի առարկա է հնագետների, մարդաբանների, պատմաբանների և լեզվաբանների հանրությունում: Ակադեմիական գրականության մեջ շրջանառվող՝ հայ ժողովրդի ոչ բնիկ ծագման վերաբերյալ վարկածների թվում գերակշռում է այսպես կոչված «բալկանյան տեսությունը», որը հիմնված է հին հույն պատմիչ Հերոդոտոսի (մ.թ.ա. 440 թ.) հաղորդած տեղեկությունների վրա: Պատմագիրը հայերին համարում էր փռյուգիացի գաղութարարներ իրենց լեզվի և զինվորական հանդերձների պատճառով, որը նրանք կրում էին պարսից արքա Քսերքսեսի բանակում»:

Լեզվական, պատմական և հնագիտական համոզիչ ապացույցների բացակայության պարագայում հայերի բալկանյան ծագման վարկածն անհրաժեշտ է ստուգել ավելի զգայուն և օբյեկտիվ գործիքակազմի կիրառմամբ, ինչպիսին է ժամանակակից գենետիկան: «Այդ տեսանկյունից Հերոդոտոսի «տարբերակը» հնարավոր է միայն բալկանյան գենետիկական սուբստրատի որոշակի ազդակների առկայության դեպքում Բալկաններից մինչև Հայկական լեռնաշխարհ ընկած տարածաշրջանի ինչպես հնագիտական նյութում, այնպես էլ ժամանակակից բնակչության, այդ թվում՝ հայերի գենոֆոնդում»,- ասաց պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը:

Անցյալի ժողովրդագրական գործընթացների մասին գենետիկական առումով «գրավոր» ապացույցներ ստանալու համար հետազոտվել են վերոնշյալ աշխարհագրական տարածքից ստացված հնագույն ԴՆԹ-ի նմուշներ, որոնք պատկանում են ժամանակագրորեն հաջորդական դարաշրջաններին (նեոլիթից մինչև անտիկ)՝ համեմատելով դրանք համապատասխան տարածաշրջանի ժամանակակից բնակչության գենետիկական նյութի հետ: Ամբողջական գենոմային վերլուծության արդյունքում պարզվել է, որ հայկական գենոֆոնդն ունի ավելի քան 6000 տարվա շարունակական գենետիկական պատմություն: Այս պատկերն էականորեն տարբերվում է Հարավարևմտյան Ասիայի այլ պոպուլյացիաների ժողովրդագրական պատմությունից, որոնք ենթարկվել են արտաքին գենետիկական զգալի ազդեցությունների: «Մի քանի հազարամյակների ընթացքում գենոֆոնդի կայունության բարձր մակարդակով հայերն առանձնանում են նույնիսկ Սարդինիայի բնակչությունից, որը երկար ժամանակ համարվում էր դասական գենետիկական իզոլյատ նեոլիթից ընդհուպ մինչև բրոնզի դարի վերջը, այն դեպքում, երբ գրեթե ողջ մայրցամաքային Եվրոպան ենթարկվել է օտարերկրացիների բազմաթիվ ներխուժումների, որոնց գենետիկական ազդակները պահպանվել են մինչ օրս: Հայկական լեռնաշխարհում հայերի բնիկ ծագումն ապացուցող տեղեկություններն արժեքավոր աղբյուր են հայագետների համար, որոնք զբաղվում են հայերի էթնոգենեզի, հայկական մշակույթի և լեզվի ծագման ու զարգացման հարցերով», - ընդգծեց պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՏԱՐՀԱՆՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՍՑԵՆԱՐՈՎ

Յուրաքանչյուր մարդ կենցաղում, աշխատավայրում, ուսումնական հաստատությունում կարող է հայտնվել այնպիսի իրավիճակներում, որոնք ուղեկցվում են մարդու կյանքի վրա բացասաբար ազդող գործոնների առաջացմամբ: Դա արտակարգ իրավիճակ է:

Արտակարգ իրավիճակներում աղետի հանկարծակիության, իրավիճակի ծայրահեղության, գիտելիքների, կարողությունների, հմտությունների և հոգեբանական պատրաստվածության պակասի դեպքում առավել խոցելի են երեխաները, որոնց կյանքի և առողջության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում պետության գերակա խնդիրներից է: Դպրոցում աշակերտների մոտ պետք է ձևավորել անվտանգության մշակույթ, որպեսզի արտակարգ իրավիճակներում առանց խուճապի կարողանան դրսևորել ճիշտ վարք: Այդպիսի վարք ձևավորելու գործում կարևոր միջոցառում է տարհանումը: Վերջինս վտանգավոր տարածքից անվտանգ տարածք մարդկանց տեղափոխումն է:

ՀՀ ԱԻ նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ-ի՝ բնակչության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատողներս Արցախի Հանրապետության դպրոցներում՝ Ստեփանակերտ քաղաքում, ԱՀ շրջաններում պարբերաբար իրականացրել ենք երկրաշարժի սցենարով «տագնապ» ազդանշանով ուսումնական տարհանումներ: Հիմնական նպատակն է՝ գործնականում ստուգել ու ամրապնդել երեխաների հմտությունները երկրաշարժի դեպքում անվտանգության վարքականոնների պահպանման վերաբերյալ:

Տարհանման կազմակերպումն ու անցկացումը պահանջում են տարհանման միջոցառումների նախնական պլանավորում: Դպրոցում տարհանման իրականացման մասին պետք է իմանան միայն դպրոցի տնօրենը և զինղեկը, որոնք աջակցում են բարձր մակարդակով անցկացնելու ուսումնական տարհանումը: Տարհանումը շատ ավելի հեշտ է կազմակերպել, եթե դպրոցի պատերին փակցված են դրա նշանները, դուրս գալու, հավաքատեղի ուղղությունը:

Առաջին հերթին բաժնի աշխատողներս դասարաններում իրականացնում ենք սեյսմապաշտպանության վարքականոնների վերաբերյալ ուսուցում: Աշակերտները և ուսուցիչները անտեղյակ՝ հնչում է «տանգնապ» ազդանշանը: Դասարաններում դադարեցվում են պարապմունքները, ուսուցիչները վերցնում են դասամատյանները, աշակերտներին ուղեկցում, դուրս են բերում բաց, անվտանգ տարածք: Տարհանման ընթացքում ապահովվում է աշակերտների հանգիստ պահվածքը, կանխվում հնարավոր խուճապը: Անվտանգ տարածքում, հիշելով երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները՝ հեռու շինություններից, էլեկտրահաղորդալարերից, ուսուցիչները ներկա-բացակայի միջոցով ճշտում են, թե արդյո՞ք բոլոր աշակերտներն են հասցրել դուրս գալ դպրոցի շենքից: Նրանք զեկուցում են զինղեկին, իսկ զինղեկը՝ դպրոցի տնօրենին և մեզ: Ուսումնական տարհանումը գերազանց վարժանք է դպրոցի անձնակազմի և աշակերտների համար, որի ընթացքում նրանք ոչ միայն սովորում են ճիշտ կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում, այլև բացահայտում են տարհանման ժամանակ իրենց կողմից թույլ տրված թերությունները: Վերջում դպրոցի տնօրենի և զինղեկի հետ բացահայտում ենք թերությունները՝ հետագայում այդ ուղղությամբ աշխատելու համար: Տարհանման ժամանակ, ինչքան էլ դա լինի ուսումնական, փորձնական, միևնույն է, աշակերտների կողմից նկատվում է խուճապ, բնականաբար, նրանց հուզականային վիճակը մի պահ խախտվում է, և այն տպավորությունն է, որ կա վտանգ, աղետ և իրենց այդ պահին տարհանում են: Միջոցառման վերջում տարհանման գնահատման թերթիկը լրացվում է դպրոցի տնօրենի և զինղեկի կողմից, որտեղ նշվում են դպրոցի մասնաշենքի սեյսմակայունության և բաց տարածության, տարհանման ուղիների առկայության մասին, տարհանվողների թիվը: Տրվում է եզրակացություն, թե աշակերտները որքանով են տիրապետում երկրաշարժից պաշտպանվելու վարքականոններին, ինչ կարողությունների և հմտությունների են տիրապետում:

Մեր նպատակն է՝ դպրոցներում սիստեմատիկաբար անցկացնել երկրաշարժի սցենարով փորձնական տարհանումներ, որպեսզի երկրաշարժի դեպքում երեխաները կարողանան առանց խուճապի դրսևորել ճիշտ վարք՝ օգտագործելով սեյսմապաշտպանության վարքականոնները:

Դրանք են՝

- արտակարգ իրավիճակներում գործել արագ, հստակ, առանց խուճապի.
- մեջքով պատին հենված՝ արագ վազել աստիճաններով, չօգտվել վերելակից, քանի որ այն կարող է հոսանքազրկվել և ծուղակ դառնալ տարհանվողների համար.
- զգուշանալ ցած ընկող առարկաներից, փշրվող ապակու կտորներից, պոկված էլեկտրալարերից.
- չփորձել մտնել շենք:

Մեզնից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ միայն գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով կարող է դիմակայել աղետներին:

Հայկանուշ ԵՍԱՅԱՆ
ՀՀ ԱԻՆ «ՍՊԱՐԾ» ՊՈԱԿ-ի բնակչության հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչ

ՅՈՒՆԵՍԿՕ-Ն ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋԱՏԱՐ Է ՀԱՄԱՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

2021-ը ռեկորդային էր աստղագիտական հոդվածների թվով. տեղական և միջազգային պարբերականներում հայ աստղագետները տպագրել են 81 հոդված: Համեմատության համար նշենք, որ մի քանի տարի առաջ այս թիվն էականորեն փոքր էր, 2014-ին՝ 26, 2015-ին՝ 17 և այլն:

Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանն ասում է՝ հայ աստղագետների 30 %-ը երիտասարդներն են, աստղագետի կարծիքով՝ գիտության զարգացման համար այս թիվը բավական հուսադրող է: Միքայելյանը ներկայացնում է «Սիմագո» միջազգային տվյալների շտեմարանի ցուցանիշները: Այն ներկայացնում է 200 երկրների ցուցանիշները տարբեր բնագավառներում: Ըստ այդմ՝ Հայաստանը ֆիզիկայի և աստղագիտության ցանկում 60-րդն է, իսկ աստղագիտության և աստղաֆիզիկայի դեպքում՝ 41-րդը: Այս ցուցանիշը բավական հուսադրող է, բայց ավելի ցածր է, քան 1996-ին, երբ նույն ոլորտներում Հայաստանը համապատասխանաբար զբաղեցնում էր 45 և 30-րդ հորիզոնականները:

«Աստղագետների թվով մենք աշխարհում առաջատարներից ենք: Հայաստանում 54 աստղագետ կա և ստացվում է, որ 1 միլիոն բնակչությանն ընկնում է 18 աստղագետ, իսկ այսպիսի ցուցանիշով մենք աշխարհում 9-րդն ենք: Այսինքն՝ աշխարհի շատ այլ առաջատար երկրներում միջինում ավելի քիչ աստղագետ գիտնականներ կան, քան Հայաստանում է»,-ասում է Արեգ Միքայելյանը:

Նախորդ տարվա ընթացքում Բյուրականի աստղադիտարանը 23 պետությունների հետ համագործակցել է՝ իրականացնելով մի շարք ծրագրեր: Տնօրենի խոսքով՝ համավարակը ոչ թե խանգարել է, այլ ընդհակառակը՝ նպաստել ավելի շատ գիտական հոդվածներ գրելու և օնլայն հարթակում կապեր հաստատելու, գիտական զեկուցումներ պատրաստելու հարցում, որտեղ ի դեպ, Հայաստանն աշխարհում բացարձակ առաջատար է.

«Զարմանալի մի փաստ ասեմ, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ն է տալիս իր ամենամյա գիտական զեկույցում. գիտական արդյունքի տեսանկյունից Հայաստանն առաջինն է, այսինքն՝ ստացվում է, որ հայ գիտնականը, հայաստանյան պայմաններում այդքան քիչ ֆինանս ունենալով հանդերձ, միջազգային այսքան բարձր ցուցանիշ է գրանցում աստղագիտության ոլորտում»,- ասում է Արեգ Միքայելյանը:

Բյուրականի աստղադիտարանը 50 հա տարածք է զբաղեցնում, 104 աշխատակից ունի: Աստղադիտարանի պետական ֆինանսավորումը ամսական 1,5 միլիոն դրամ է: Սեփական ռեսուրսով գումար աշխատելու տեսանկյունից 2021-ը ևս ռեկորդային էր. էքսկուրսիաներից գոյացած գումարը 20,5 միլիոն դրամ է: Արեգ Միքայելյանի խոսքով՝ սա դեռ 5 տարի առաջ աստղադիտարանի որդեգրած քաղաքականության արդյունքն է՝ շեշտադրել այցելությունները աստղադիտարան: Առաջիկայում անելիքներն ու ծրագրերը ևս շատ են, Արեգ Միքայելյանն առանձնացնում է մի քանիսը՝ զարգացնել միջծյուղային գիտությունները Հայաստանում, լրացնել ժամանակակից դիտողական սարքերի պակասը, կադրերի ներհոսք ապահովել աստղադիտարան:

Ավելացնենք, որ 2021-ին Բյուրականի աստղադիտարանի և Արցախի գիտական կենտրոնի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, ինչն ակտիվ ընթացքի մեջ է:

ԴԱՍԱԿԱՆ ԷՋ

ՐԱՖՖՈՒ ՆՈՐԹԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Մաս 5

Սկիզբը՝ «Լուսարար»-ի նախորդ համարներում

ԷՐՔԵՋ

Մի թուրքից ձի վարձելով, ճանապարհ ընկա: Ձիու տերը եկավ ինձ հետ ճանապարհը ցույց տալու համար: Հարցուփորձով հասկացա, որ իմ առաջնորդը թուրքի մի թափառական ցեղին էր պատկանում, և մեծ անզգուշություն էր իմ կողմից մի այսպիսի ավազակի հետ, միայնակ, լեռների վրա ճանապարհորդել: Նա փիադա էր, ասացի, որ առաջ գնա, իսկ ես ձիով կհետևեմ նրան: Այդ այն նպատակով էր, եթե թուրքը ինձ կողոպտելու փորձ անե, ես կարողանամ շուտով նկատել և պաշտպանվելու միջոց ունենամ: Իմ հետևից գալով, նա կարող էր մի ատրճանակի հարվածքով ինձ ցած գլորել, հետո կողոպտել: Բարեբախտաբար ոչինչ չպատահեց և ես Թոդան թուրքաբնակ գյուղից անցնելով, անվտանգ հասա հայոց էրքեջ գյուղը, որ գտնվում է Բալայքյուրակ գետի մոտ:

էրքեջ հայկական գյուղը

Չկամենալով էրքեջում երկար մնալ, շուտով կանչել տվի գյուղի քահանային, որ եկեղեցու դուռը բաց անե: Քահանան հայտնվեցավ, դա Կարա-բուլաղի արհեստավոր քահանայի հակապատկերն էր: Նա հոժարությամբ բաց արավ եկեղեցու դռները, կարծելով, թե ես ուխտավոր եմ և շուտով ավետարանը և մի կոտրած խաչ դրեց սեղանի վրա, որ ես համբուրեմ և նրան փող տամ: Բայց երբ նկատեց, որ ես հիշատետրը դուրս հանեցի ծոցիցս և սկսեցի մատիտով մի քանի նկատողություններ անել նրա վրա, քահանան սարսափեց, կարծելով, թե ես մի պաշտոնական անձն եմ և սատանան գիտե, ինչ նպատակով եկել եմ նրա եկեղեցին «գրելու»: Իմ բոլոր ջանքը, համոզելու նրան, որ նա այսպիսի կասկածներ չունենա, իզուր անցավ: Նա ոչինչ չկամեցավ ինձ ցույց տալ:

էրքեջի սուրբ Սարգիս եկեղեցին, լուս. Ա.Դուլյանի 1980 թ.

Մտածելով, որ կարող է մի անախորժություն պատահել, ես թողեցի ու դուրս եկա եկեղեցուց, բայց ամենևին չմեղադրելով ողորմելի քահանային:

ՂԱՐԱՉԻՆԱՐ (ԱՂՋԱՂԱԼԱ ԿԱՄ ՍՊԻՏԱԿ ԲԵՐԴ)

Էրքեջից դուրս գալով, շարունակեցի իմ ճանապարհը դեպի Կարաչինար, կամ Աղջաղալա (Սպիտակ բերդ): Դեպի ձախ կողմի լեռները, որ շարունակություն են Մռավ լեռան, պատած էին անտառներով. իսկ դեպի ձախ բարձրավանդակները փոքր առ փոքր իջնում են լեռները, ավելի տափարակ ձև են ստանում, անտառներ չկան, միայն պատած են ճոխ խոտաբույսերով և մշակած արտերով: Երեկոյան ես հասա Ղարաչինար, Մելիք Բեգլարովների տունը:

Գյուլիստանի մահալը կոչվում է Թալիշի մահալ, նա կոչվում է և Իգիրմիդորդ (24), որովհետև բաղկացած է քսան և չորս գյուղերից: Նրա սահմաններն են՝ հյուսիսից Քյուրակ գետը, հարավից Թարթար գետը, արևելքից այժմյան փոստի ճանապարհը, իսկ արևմուտքից Մռավ սարը: Այդ մահալը

Մելիք-Բեգլարյանների տան դարպասի բարավորը: 1868 թ: Ղարաչինար: Լուս. Ս. Կարապետյանի, «Մռավականք»

նախքան ռուսաց տիրապետությունը էր Ղարաբաղի հինգ դաշնակցական մելիքությունների (*խամսայի-խամսա՝ արաբ. նշանակում է հինգ.այսպես կոչվում էին հինգ դաշնակցական մելիքությունների երկրները, որ հետևյալներն էին՝ 1. Գյուլիստան, 2. Ջրաբերդ, 3. Խաչեն, 4. Վարանդա, 5. Դուզախ)* մասներից մեկը: Այստեղ իշխում էին Թալիշի հայ մելիքները, և ամբողջ մահալը նրանց սեփականությունն էր, թե երկիրը և թե իշխանությունը անցնում էր սերունդից սերունդ:

Դիտավորություն ունենալով առանձին գրքով հրատարակել Ղարաբաղի մելիքների պատմությունը, որոնց թվում և կլինի Գյուլիստանի մելիքների պատմությունը, այժմ այսքանը միայն կասեմ, որ Գյուլիստանի մահալի այժմյան տիրապետողները միակ են Ղարաբաղի բոլոր մելիքներից, որ կարողացել են ամբողջապես պահպանել իրանց հայրական ժառանգությունը: Հին Գյուլիստանը իր սահմաններով այժմ որպես կալվածք և սեփականություն գտնվում է այդ երկրի նախկին տիրապետողների ժառանգների ձեռքում, որ բաժանված են երկու ճյուղերի, մեկը՝ Մելիք Բեգլարովները, մյուսը՝ Մելիք Յուսուփովները:

Մելիք Բեգլարովների տոհմի ձեռքում կա մինչև 70 հազար դեսյատին հող, իր դաշտերով, լեռներով, անտառներով և արոտամարգերով: Այդ տարածության վրա կա 15 գյուղ, չհաշվելով ձմեռոցները: Մելիք Յուսուփովների ձեռքում կա 20 հազար դեսյատին հող, երեք գյուղերով:

Գալով Կարաչինար, կամ Աղջակալա գյուղը, ես իջա Մելիք Բեգլարովների տանը: Ինձ առաջին անգամ պատահում էր տեսնել մի հայ մեծ կալվածատիրոջ տնտեսությունը:

Կալվածատիրոջ տունը համարյա մի ամրոց է. նրա մոտով խոր ձորի միջով անցնում է Գորան գետը: Ահագին դարվազայից ներս մտնելով, ձեր առջև բացվում է մի ընդարձակ բակ: Նրա մի կողմում շինված են ցորենի և այլ բերքերի պահելու համար ամբարներ, մյուս կողմում՝ գինի պահելու մառաններ և զանազան ծածկոցներ երկրագործական անոթներ պահելու համար. մի կողմում ձիաների ախոռատունն է. մի կողմում կալվածատիրոջ բնակարանն է զանազան վայելուչ սենյակներով: Սենյակների մի երեսը նայում է դեպի բակը, իսկ մյուս երեսը՝ դեպի գեղեցիկ պարտեզը: Տունը ունի բոլոր հարմարությունները կանոնավոր գյուղատնտեսության համար:

Կարաչինարի Սուրբ Հովհաննես եկեղեցին:

Կանոնավոր գյուղատնտեսություն ասելով չպետք է հասկանալ եվրոպական գյուղատնտեսություն, այլ մեր տեսած, մեր ունեցած գյուղական տնտեսություններից ամենակատարյալը:

Մելիք Բեգլարովները առաջինը եղան Գանձակի գավառի կալվածատերերի մեջ, որ բերել տվեցին եվրոպական գութան և հնձելու մեքենա: Այդ փորձից հայտնվում է, որ եվրոպական երկրագործական մեքենաները չեն կարող մի առանձին օգուտ տալ, եթե հարմարած չլինեն մեր երկրի տեղական պայմաններին: Ահա ինչ պատճառով:

Այս կողմերում հողի պարարտությունը բուսցնում է շատ բարձրահասակ հունձք, գյուղացիք հնձում են հասկերը միայն մի երկու կամ ավելի թզաչափ ծողի հետ. իսկ ծողի մնացած մասը մեկ արշինի չափ մնում է գետնի վրա: Այդ նրա համար է, որ կարճ հնձելով, ավելի հեշտությամբ է ծեծվում, բացի դրանից, ծողի վերին մասը ավելի նուրբ լինելով, հարդը ավելի փափուկ և ավելի նուրբ է լինում, անասունները ախորժակով են ուտում:

Եվրոպական հնձելու մեքենան չէ համապատասխանում այդ պայմաններին: Նա բոլորովին տակիցն է հնձում, այսպիսի հունձքի խուրձերը համ երկար են լինում, համ դժվարությամբ են կալսվում, համ հարդը կոշտ է լինում, անասունները չեն ուտում: Շատ հասկանալի է, որ հնձելու մեքենաները պատրաստվում են այն երկրների համար, ուր հարդը չեն ուտացնում անասուններին:

Գութանի անհարմարությունը նրանում է, որ նա թեև համեմատաբար սակավ զույգ անասուններ է պահանջում բանեցնելու համար, բայց այնքան խոր ակոսներ չէ ձգում, որպես մեր գութանները: Իսկ խոր ակոսները հարկավոր է մեր երկրի հողի համար, մանավանդ արան տեղերի ջրային ցանքերի համար: Եթե ակոսը խոր չէ, ցանքը շուտով է ծարավում, և եթե շուտով ջուր չեն հասցնում՝ այրվում է: Մինչդեռ խոր ակոսը կարող է խոնավություն պահպանել և ցանքը շուտ չէ ծարավում: Այդ ավելի նպաստավոր է, որովհետև ջուրը այս կողմերում սակավ է:

Կան և տեխնիկական անհարմարություններ, հանկարծ մեքենայի մեկ վինտը կամ մի ուրիշ տեղը կոտրվում է, ամբողջ մեքենան դադարում է, ո՞վ պիտի շինի, մի կալվածատեր չէ կարող մի երկու մեքենայի համար մի մեխանիկ պահել յուր մոտ: Մինչև գրեն, մինչև Եվրոպայից բերել տան կոտրված մասը, ժամանակներ կանցկենա. բայց մշակության գործը չէ սպասում, նա պետք է յուր ժամանակին կատարվի:

Այդ բոլոր անհարմարությունները կվերջանան այն ժամանակ միայն, երբ երկրագործական անոթները թեև եվրոպական սիստեմով, բայց մեր երկրի պահանջներին հարմարեցրած, մեզ մոտ կպատրաստվին և վնասված ժամանակ դյուրին կլինի նրանց նորոգել տալ: Այդ կարող է լինել այն ժամանակ միայն, երբ մի քանի կալվածատեր, կամ մի քանի գյուղերի հասարակությունը միանալով, ընդհանուր ծախքով բերել կտան մեխանիկներ և բաց անել կտան անոթներ պատրաստելու գործարաններ:

Ավելորդ չեմ համարում համառոտ կերպով մի քանի տեղեկություններ տալ այդ կողմերի երկրագործության վրա: Ժամանակի վերաբերությամբ ցանքը լինում է երկու տեսակ, գարունցան և աշունցան, այսինքն՝ մեկը գարնանն են ցանում, մյուսը՝ աշնանը: Գարնան ցանքի սերմը պետք է գարնան ցանքից ստացած հունձքից լինի, իսկ աշնան ցանքի սերմը պետք է աշնան ցանքից ստացած հունձքից լինի: Գարնան ցանքերը անվում են ըստ մեծի մասին սարոտ և ցուրտ տեղերում, ուր չեն ջրում, ջրվում է անձրևով և ցողով: Իսկ աշնան ցանքը անվում են ըստ մեծի մասին օրան տեղերում, ուր պետք է ջրել:

Կարաչինարի արտերը

Մի քանի խոսք էլ կալվածական իրավունքների մասին: Գանձակի գավառում կան երեք տեսակ հողեր.

1. Աղալարների հողերը, որ 47 թվի հողային պալաժենիայի զորությամբ, տրվեցավ աղալարներին վայելելու համար, նրանց իրավունք տալով ստանալ գյուղացիներից բերքի տասն մասնից մեկ մասը.

2. Կալվածատերերի հողերը, դրանք հողի սեփականատերեր են, կամ ժառանգությամբ ստացած, կամ փողով գնած, իրավունք ունին կապել գյուղացիների հետ ամեն տեսակ պայմաններ, որ իրանց շահավետ է, կամ տասանորդ ստանալու, կամ տասնից երկու մասը և կամ տասնից երեք մասը և այլն:

3. Երրորդ տեսակը արքունի հողերն են, որոնց մշակող գյուղացիները վճարում են հարկ միայն, բայց բերքից մաս չեն վճարում: (Որքան ես տեղեկացա, Մելիք Բեգլարովները իրանց բոլոր գյուղացիներից ստանում են տասանորդ միայն):

ՄԵՐ ՄԱՍԻՆ

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ. ՂԱՐԱԲԱՂ

Սերգեյ Գորոդեցկի (1884-1967):

Ռուս նշանավոր բանաստեղծ, թարգմանիչ, հասարակական գործիչ. հայ ժողովրդի հավատարիմ բարեկամ: 1916-ի ապրիլին եղել է Արևմտյան Հայաստանում, տեսել է ավերված երկիր և կոտորված հայություն:

1917-1921թթ. ապրել և գործել է Անդրկովկասում, մտերիմ է եղել հայ գրական և հասարակական գործիչների հետ. առանձնակի պետք է նշել նրա մտերմությունը Հովհաննես Թումանյանի հետ:

Գրել է բազմաթիվ հոդվածներ և բանաստեղծություններ՝ նվիրված Հայաստանին և Արցախին:

Հայկական հարցին և Հայաստանին նվիրված նրա հոդվածները, բանաստեղծությունները և նամակները մեզանում բազմիցս են տպագրվել ռուսերեն և հայերեն: Ներկայացնում ենք «Ղարաբաղ» հանրահայտ հոդվածը («Կովկասյան խոսք», 1919, 23 մարտի):

Ամեն երկիր ու ամեն ազգ ունի իր նվիրական ամրությունները: Եթե ժողովրդի պատմությունը երջանիկ ընթացք է ունենում, դրանք դառնում են մշակութային ու քաղաքական կյանքի առանցքը, իսկ եթե ճակատագիրը հետապնդում է ազգին, դրանք դառնում են ազգային կյանքի հենարան-պատվարը (ցանկապատը), հույսերի կղզին, վերածննդի գրավականը:

Հենց այս վերջին դերն է հայ ժողովրդի համար ունեցել և ունի Ղարաբաղի լեռնային հատվածը:

Ինքը՝ բնությունը, սրան չափազանց մեծ նշանակություն է տվել: Այնտեղ՝ Ղարաբաղի անմատչելի բարձունքներում, որ Կարսի ու Սևանի լեռնաբազուկների շարունակությունն են, երկու հազար տարուց ավելի հայ ժողովուրդը տարել է թափառական ցեղերի ճնշումը՝ պահպանելով իր մշակույթն ու ազգային դեմքը:

Ազգագրորեն, տնտեսապես և լեզվով միասնական լինելով՝ Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին այն եղել է անցյալում, այդպիսին է այսօր, այդպիսին կլինի միշտ, քանի որ Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտը, հնարավոր չէ պաշտպանել՝ չտիրապետելով Ղարաբաղին: Մեկ անգամ չէ, որ դարերի ընթացքում հարձակումների ալիքները փշրվել են Ղարաբաղի ժայռերին, թափանցել այնտեղ միայն գետերի հովիտներով, բայց այստեղ էլ երկար չեն մնացել: Մեկ անգամ չէ, որ Սյունիքի մելիքությունները (ինչպես կոչվել է Ղարաբաղը հնում) սեփական ուժերով ետ են շպրտել ու հալածել թշնամուն: Պատմությունը կրկնվում է, և վերջին անգամ դա տեղի ունեցավ մեր աչքի առաջ:

Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են մարդու վառ արտահայտված տեսակ: Աշխարհում ցրված ղարաբաղցիները ամենուր հեշտությամբ կարող են ճանաչվել: Գործունեության մեծ թափ, անկոտրում խիզախություն, համարձակության հակում, ինքնավստահություն, ինքնատիպ համառություն, ուղղագիծ կայունություն, հայրիշխանություն ընտանեկան կենցաղում. ահա ղարաբաղցու այն համակրելի գծերը, որոնք կարծես հայկական հնագույն առաքինությունների խտացումն են: Առաքինություններ, որ գուցե և ինչ-որ չափով խամրել են պատմության դաժանություններից, սակայն անաղարտ պահպանվել Ղարաբաղում: Կյանքի փրկության համար լեռներում ապաստանած բարձրահասակ ու պնդակազմ այս ժողովուրդը ամրացել է լեռնային օդի մեջ և պահպանել իրեն հարթավայրի բնակիչներին սպառնացող վարակներից:

Հայաստանի ազգային հիշողությունը պետք է որ ղարաբաղցիների շատ զնգուն բարձր անուններ հիշի: Չկա մի բնագավառ, ուր նրանք դրսևորած չլինեն իրենց նախաձեռնությունն ու տաղանդը. քաղաքականություն, գրականություն, հասարակական գործունեություն, առևտուր… այս ամենը ասպարեզ է եղել նրանց աշխատանքի համար: Շատ անուններ կարելի է տալ, և, սակայն, չհավակնելով ամբողջին՝ հիշեցնենք միայն բոլորին հայտնի մի քանի ղարաբաղցիների մասին. քաղաքական գործիչներից իրենց ծնունդով Ղարաբաղին պարտական են Արամ փաշան (Մանուկյանը), Սաքո Սահակյանը*: Զինվորական արվեստի գծով Ղարաբաղը տվել է գեներալ Լազարևին: Արդյունաբերությունը նույնպես քիչ անուններ չունի, օրինակ՝ ղարաբաղցի էր Կոստյա Համբարձումյանը: Գրականության բնագավառից հիշենք Լեոյին, ընդունենք, որ հայկական թերթերի մեծ մասը խմբագրվում է ղարաբաղցիների կողմից:

Նման հայտնի տղամարդ գործիչներ տվող Ղարաբաղը ստեղծել, իսկ, ավելի ճիշտ, պահպանել է նաև հին հայուհու կերպարը, որի հոգեբանության ու կենցաղի մեջ շատ բան է անխաթար մնացել հայրիշխանության դարաշրջանից:

Իր մշակույթով ու ապրելակերպով կոփված-կռված Ղարաբաղը մեր օրերում էլ չի անարգել իր հին փառքը: Ինչպես Թամերլանի ժամանակներում, հավաքելով իրենց ջոկատները մելիքները պահպանել են Ղարաբաղի անկախությունը: Շուշիի դրվագը նույնպես չփոխեց Նուրի փաշայի պարտության ընդհանուր պատկերը, և պաշտպանության գիծը, ըստ էության, մնաց անձեռնմխելի, ինչպես նախորդ հարձակումների ժամանակ:

Այսպիսին է Ղարաբաղի դերը Հայաստանի համար: Եթե այն կորսվեր, ազգերի ինքնորոշման գաղափարը, անշուշտ, մեծ կորուստներ կկրեր: Եվ ընդհակառակը, պահելով Ղարաբաղը՝ Հայաստանը մշակութային էներգետիկ մեծ ուժի հոսանք կստանա, որը, խուժելով Հայաստանի քայքայված տարածքներ, կպտղավորի դրանց մշակույթը և այդպիսով իսկ կամբողջացնի Ղարաբաղի բազմադարյա փառահեղ պատմությունը:

Հիմա ամեն մի ժողովուրդ փնտրում է իրենը: Վերածնված ազգերի ողջ ապագան կախված է նրանից, թե արդյոք իրենք իրենց ներսում կգտնե՞ն, այսպես ասած, սեփական մշակույթի թթխմորի բավական քանակություն: Նման պայմաններում բոլոր այն կենտրոնները, որտեղ այս կամ այն պատճառով թանձրացել է մշակութային կյանքը, ձեռք են բերում բացառիկ նշանակություն: Այդպիսին է և Ղարաբաղի դերը Հայաստանի համար:

Ճիշտ է, պատմությունը Հայաստանին ձգել է դեպի հարավ՝ դեպի տաք ծով, և կարող է պատահել՝ այնտեղից այնպիսի ուժեր թափանցեն, որ Ղարաբաղը վեր ածեն Հայաստանի հյուսիսային ծայրամասի: Բայց և այդ դեպքում ևս այն չի կորցնում իր դերը՝ իբրև չեղծված և դարերով փորձված մշակույթի շտեմարան:

**Խոսքը, հավանաբար , «Հորիզոն» թերթի խմբագիր-հրատարակչի և "Набат" թերթի թղթակցի մասին է:*

Արքունի հողերի վրա բնակվող գյուղացիների վիճակը ավելի թեթև լինելով, գյուղացիները ոչ միայն ցանկանում են, այլ աշխատում էլ են, որ հողերը կառավարության ձեռքը անցնեն: Կառավարության և կալվածատերերի մեջ եղած վեճերի ժամանակ գյուղացիները աշխատում են պաշտպանել կառավարության շահերը: Մի քանի գյուղերում, օրինակ, Գյուլիստան գյուղում, իրանք գյուղացիները խնդիրք են տվել, թե գյուղը կառավարությանն է պատկանում և ոչ Մելիք Բեգլարովներին:

Գյուղացիների այդ ջանքը առաջ է գալիս և այն հանգամանքից, որ այս կողմերում ևս սահմանվել են հողային հաշտարար միջնորդներ, որոնք գնահատում են հողը և գյուղացիներին իրավունք են տալիս մի որոշ գնով գնելու կալվածատերերից: Այժմ գյուղացիները, կամ այնքան հասկացողություն չունենալով, որ կալվածատերերից գնեն և իրանք կալվածատեր դառնան, և մի կողմից էլ ցանկանալով ազատվել կալվածատերից, աշխատում են վկայություններ տալ, որ գյուղը թագավորական է:

Օկուպացված Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջան

Առհասարակ կալվածական վեճերը, թե կառավարության և կալվածատերերի մեջ, թե կալվածատերերի և գյուղացիների մեջ, - այս կողմերում շատ զարգացած է:

Կալվածատերերի միմյանց հետ ունեցած վեճերի ժամանակ, երբ մի կողմը թուրք է, իսկ մյուս կողմը հայ, ասում էին, որ ըստ մեծի մասին թուրքերն են տանում գործը: Պատճառները՝ 1. թուրքերի ընդունակությունը հաճոյանալու պաշտոնատարներին. 2. մահմեդական օրենքի ոգին վկայության մեջ, մահմեդականի շահերը պաշտպանելու համար:

Մելիք Բեգլարովները, բացի երկրագործությունից, պահում են ձիաների զավոդ: Ղարաբաղի հռչակված ձիաների ցեղը վերջին ժամանակներում բոլորովին այլասերվել էր: Հայտնի է, որ Ղարաբաղի ձիաների ցեղը մի խառնուրդ էր տեղական և պարսկական (արաբական) ձիաների:

Նախքան ռուսաց տիրապետությունը Ղարաբաղի խանները Պարսկաստանի հետ հարաբերություններ ունենալով, այստեղից կամ բերել էին տալիս կամ ընծա էին ստանում ազնիվ նժույգներ և իրանց ձիաների ցեղը միշտ նորոգում էին: Բայց ռուսների տիրելուց հետո նրանց հարաբերությունները Պարսկաստանի հետ կտրվեցավ, և ձիաների սերմը չնորոգվելով, այլասերվեցան: Այժմ Մելիք Բեգլարովները կազմելով մի թաբուն երկրի ընտիր մատակներից, Թեհրանից ստացել են երկու պարսկական նժույգներ, մեկը ուղարկել է Սադրազամը, մյուսը՝ Շահի փեսա մի խան: Տարակույս չկա, որ այդ հոգածություններով Մելիք Բեգլարովները կարող են վերանորոգել Ղարաբաղի ձիաների ցեղը, որ հռչակված էր մեր կողմերում:

ԽԱՐԽԱՓՈՒՏ

Օգոստոսի 4-ին դուրս եկա Կարաչինարից: Անցնելով Գորանի գետը, մի վերստ առաջ գալով, հասա Խարխափուտ կոչված հայաբնակ գյուղը, որ զարդարված էր գեղեցիկ այգիներով: Այս գյուղը գտնվում է նույն անունով ձորի բերանում, որի միջով ճանապարհը խարխափելով տանում է դեպի Գյուլիստան գյուղը: Այդ ձորը ձգվում է անտառոտ երկու լեռնային գոտիների միջով, որ բարձրանում են ճանապարհի աջ և ձախ կողմից: Ձորի միջով վազում է մի վտակ, որ գնալով խառնվում է Գորանի գետակին: Ճանապարհին պատահեց

Խարխափուտի վայրենացած այգիները: Հեռվում Մռավն է:

ինձ տեսնել Մելիք Բեգլարի այգու տեղը: Հնձանի տեղը, դարավոր թթենիները, ընկուզենիները, տանձենիները և այլ պտղատու ծառեր, ծերացած, վայրենացած, դեռ մնում են: Այդ այգին ունի մի ռոմանական նշանակություն, երևելի մելիքի կյանքից, որովհետև այդ այգու մեջ էր պահում նա յուր Բալա անունով խասային:

Շարունակելով ճանապարհը նույն ձորի միջով և կես ժամի չափ առաջ գնալով, անտառը վերջանում է և ճանապարհը ընկնում է հարթ բաձրավանդակների վրա, որը զուրկ են անտառից: Այստեղ կան արոտատեղիներ և մշակած դաշտեր: Խաչի գատուկից անցնելով, ճանապարհը հետզհետե բաժանվում է դեպի մի խոր ձոր, որի մեջ գտնվում է Գյուլիստան գյուղը:

150-ԱՄՅԱԿ

ՄԱՅՐԻԿԸ. ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հովհաննես Թումանյան. Ամենայն Հայոց բանաստեղծ, «Անհաս Արարատը մեր նոր քերթության», ինչպես կասեր Չարենցը, «Անուշ»-ի ու «Թմկաբերդ»-ի, անզուգական քառյակների ու պատմվածքների հեղինակ և այլ ժառանգություն թողած հայ մեծ բանաստեղծ ու գրող, մշակութային գործիչ ենք ճանաչում Թումանյանին: Բայց Թումանյանը թողել է նաև 10 զավակ, որոնք ունեցել են կարևոր դեր մեր ժողովրդի կյանքում, սակայն նաև ունեցել են ողբերգական պատմություն: Թումանյանի 10 զավակների մայր Օլգա Թումանյանի (Մարիամ Մաճկալյանի) մասին էլ քիչ գիտենք, սակայն երբ ծանոթանում ենք սովորական հայ կնոջ պատմությանը, հասկանում ենք նաև՝ ինչ է նշանակում լինել մայր, հայ մայր, ճանաչված գրողի կին ու նեցուկ: Եվ այս առեղծվածային մայրիկի մասին կարող եք ծանոթանալ՝ այցելելով Երևանի Հովհաննես Թումանյանի թանգարան, որի սրահում 2021թ. դեկտեմբերի 22-ից գործում է «ՄԱՅՐԻԿԸ. ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ» խորագիրը կրող ժամանակավոր ցուցադրություն՝ նվիրված Օլգա Թումանյանի ծննդյան 150-ամյակին: Օրերս այցելեցի թանգարան և տնօրեն Անի Եղիազարյանի ուղեկցությամբ ծանոթացա ցուցադրությանը և Մեծ մայրիկի կյանքի պատմությանը:

Ա. Եղիազարյանը տեղեկացրեց, որ ցուցադրության բացման օրը տեղի է ունեցել «ՄԱՅՐԻԿԸ. ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ» ֆիլմի ցուցադրություն և համանուն պատկերագրքի շնորհանդես: Օ. Թումանյանի մասին են խոսել թումանյանագետներն ու Թումանյան ընտանիքի մտերիմ-ազգականները:

Միջոցառմանը ներկա է եղել նաև Վրաստանում «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի պատվիրակությունը՝ տնօրեն Գիսանե Հովսեփյանի ղեկավարությամբ: Նրանք ներկաներին էին փոխանցել Վիրահայոց թեմի առաջնորդ Հոգեշնորհ Տ. Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնանքի, ողջույնի և շնորհավորանքի խոսքը՝ նվիրված Մեծ մայրիկի 150-ամյակին: Աշխարհի տարբեր անկյուններից Մեծ մայրիկի ծննդյան երեկոյին իրենց մասնակցությունն էին ապահովել տեսանյութերի և գրավոր նամակների տեսքով, այդ թվում՝ Սուրմա Թումանյանը (Արեգ Թումանյանի դուստրը) Պետերբուրգից, Կարինե Ջանջուղազյանը (Մուշեղ Թումանյանի թոռնուհին), Հովհաննես Հարությունյանը (Մուշեղ Թումանյանի թոռը) Մոսկվայից: Բացառիկ անակնկալ են մատուցել Թումանյանի թոռնուհի Իրմա Սաֆրազբեկյանը որդու՝ Ռուբենի հետ: Գերմանիայից «Լոռվա Ջոր» ՀՄ ղեկավար Սերգո Երիցյանի ձեռամբ Հովհ. Թումանյանի թանգարանին հանձնել են ընտանեկան մասունք Օլգա Թումանյանից: Թումանյանների ծոռներից Ռուբեն Քանքանյանը Մեծ տատիկի ծննդյան 150-ամյակի առթիվ թանգարանին է հանձնել վերջինիս թութունատուփը, որը նույնպես ցուցադրված է: Ցուցադրության բացումն ամփոփվել է Վազգեն Սրբազան Միրզախանյանի օրհնությամբ և աղոթքով: Նշեմ, որ թանգարանի տնօրինությունը և աշխատակիցները կարողացել են հետաքրքիր ձևավորել ցուցադրությունը՝ այն դարձնելով առավել ընկալելի ու հիշարժան: Սրահի սկզբնամասում է Հովհ. և Օ. Թումանյանների մեծադիր լուսանկարը՝ «Մայրիկը. Օլգա Թումանյան» մակագրությամբ: Ներքևում Թումանյանի խոսքն է. «Կինը ամենամեծ ուժն է»: Պատին լուսանկարներ են՝ սկսվելով Օ. Թումանյանի դիմանկարով: Ներքևում նրա ծննդյան օրն է, ամիսն ու տարեթիվը: Ծնվել է 1871թ. դեկտեմբերի 22-ին Թիֆլիսում՝ Խարխուխ թաղամասում՝ տատի տանը: Եղել է ծնողների՝ շուլավերցի այգետեր Բաղալ Մաճկալյանի և 15 տարեկանում ամուսնացած Շուշանիկ մոր միակ զավակը: 3 տարի լավ սովորել է իրենց տանը մոտիկ Նորաշենի դպրոցում: Իր խոսքով. «...վերակացուն ինձ միշտ գովում էր և օրինակ բերում մյուսներին»: 1885-ին ընդունվել է Հովնանյան դպրոցի առաջին դասարան: Այստեղ նույնպես լավ է սովորել և, հոգաբարձու Իզմիրյանի խոսքով, միակ աշակերտն է եղել, որ «չիք» չունի: 1887-ին փակվել է Հովնանյան դպրոցը: 1887 թվականին ծանոթացել է Հովհաննեսի հետ, որն այդ ժամանակ եղել է կոնսիստորի (Թեմական հոգևոր մարմնի պետ, որն օժտված էր վարչական ու դատական լիազորություններով) գրագիր: Հետագայում պարզվել է, որ Օլգայի մայրը, տեր Հովհաննեսը, Ներսես քահանա Աբովյանը (Հովհաննեսի ընկերոջ՝ Անուշավանի հորեղբայրը) առանց իրեն տեղյակ պահելու որոշել են ամուսնացնել Հովհաննեսի հետ՝ պայմանով, որ Հովհաննեսը հետագայում ձեռնադրվի քահանա: Պատին ցուցադրված լուսանկարներից երկրորդը Թումանյանինն է՝ տակը մակագրություն. Դեկտեմբերի 1-ին պսակվեցինք: Ես 17 տարեկան էի, Օհանեսը՝ 19, Հազիրի խումբն էր նվագում: 6 քահանա կար և 1 վարդապետ: Օհանեսի հայրն ասաց՝ իմ տղին ե՛ս պետք է պսակեմ: Հետագայում Օհանեսը հրաժարվել է ձեռնադրվել քահանա և հեռացել է կոնսիստորի գրագրի պաշտոնից: Ցուցադրված լուսանկարներում նրանց 10 զավակներն են. յուրաքանչյուրի տակ կա մակագրություն ծննդյան թվի, ամսվա, օրվա, որոշներինը՝ նաև ժամվա, անվան, հերթական համարի և որևէ իրադարձության մասին: Այսպես, առաջին զավակը՝ Մուշեղը, ծնվել է 1989թ. օգոստոսի 15-ին, երեկոյան ժամը 9:58 րոպեին: Երկրորդ զավակը՝ Աշխենը, ծնվել է 1891թ. մարտի 15-ին, Նվարդը՝ 1892թ. սեպտեմբերի 20-ին, Արտավազդը՝ 1894թ. նոյեմբերի 23-ին: Այստեղ նշված է նաև, որ Դսեղ առաջին անգամ Օլգան գնացել է Արտավազդի ծնվելուց հետո՝ 1895թ. ամռանը: Հետաքրքիր դեպք է տեղի ունեցել. կայարանից Թումանյանի հայրը, թոռանը կրծքին կապած, գյուղ է տարել: Գյուղացիք այդ տեսնելով՝ ասել են. «Տեր Թադևոսը Սուրբ նշան է բերում»: Ա. Եղիազարյանն ասաց, որ այդ ժամանակ երաշտ է եղել, և հաջորդ օրը հորդառատ անձրև է մաղել: Նշեմ, որ Արտավազդը զոհվել է 1918թ.: Եղել է Վանի պարետը և այստեղից հեռանալիս ճանապարհին զոհվել է՝ դառնալով քրդական խարդավանքի զոհ: Ցուցադրությունում նաև նշված է Օլգայի զավակների մահվան մասին: Նվարդ Թումանյանը տեղեկացնում է. «Արտիկի մահվան բոթն առնելուց մեր տունը մռայլվեց»: Արտավազդն զբաղվել է թատերագրությամբ. Դսեղում առաջին անգամ բեմադրել է «Գիքորը» պատմվածքը: Նաև նկարել է. եղել է Եղիշե Թադևոսյանի աշակերտը: 1896թ. օգոստոսի 23-ին ծնվել է Թումանյանների 5-րդ զավակը՝ երրորդ որդին՝ Համլիկը, 1898-ի հունվարի 27-ին՝ Անուշը: Օ. Թումանյանն իր հուշերում գրել է. «Օհանեսն ուրախ-ուրախ գնաց, միս ու գինի գնեց, խորոված սարքեց, սուփրա գցեց և վրացի տատմոր հետ սեղան նստեց»: 7-րդ զավակը՝ Արփիկը, ծնվել է 1899թ. սեպտեմբերի 27-ին, Արեգը՝ 4-րդ որդին, ծնվել է 1901թ. նոյեմբերի 27-ին, 1905թ. հունվարի 5-ին է ծնվել Սեդան, և վերջինը ծնվել է Թամարը՝ 1907թ. մայիսի 10-ին: Ցուցադրված են նաև Թումանյանների թոռների լուսանկարներն ու ծնվելու տարեթիվը, օրը, ամիսը: Առաջինը 1914թ. օգոստոսի 10-ին ծնվել է Հովհաննեսը: 1923-ին Մոսկվայում՝ հիվանդանոցում, քաղցկեղից մահացել է Հովհաննես Թումանյանը: Արեգ որդին մորը գրել է. «Դու մեծ Մայր ես, ինչպես Հայրիկն էր ասում իր վերջին օրերին, և էդ մեծությունն ու մայրությունը էսօր ավելի քան հարկավոր է»: Առավել ծանր է եղել Օ. Թումանյանի համար, երբ ձերբակալվել են 3 որդիները 1937-38 թվականներին՝ ստանձնադակահարել են 1938 թվականին: Համլիկն ունեցել է Նեկտար անունով մի աղջիկ: Մուշեղն ունեցել է 3 երեխա՝ Անահիտ, Նադեժդա Վիգեն: Վիգենին, որպես բռնադատվածի զավակ, բանակ չեն տարել, սակայն նա կամավոր մեկնել է բանակ և զոհվել Մեծ Հայրենականում՝ Մոսկվայի պաշտպանության մարտերում:

Սրահում ցուցադրված են նաև Օլգայի ձեռագործ աշխատանքները: Որդիների ձերբակալությունից հետո երկար ժամանակ մայրը չի խոսել, տանը եղած գուլպաները քանդել, թելերը ներկել ու շալեր է գործել: Այդ շալերից մեկը նույնպես ցուցադրված է: Ամուսնու և հինգ երեխաների մահվանից հետո Օլգա Թումանյանին հաջողվում է Թումանյանների թիֆլիսյան տան ունեցվածքի մեծ մասն ու բանաստեղծի ձեռագիր ժառանգությունը Երևան տեղափոխել և դուստրերի հետ ստեղծել Թումանյանի թանգարանը:

Հովհաննես Թումանյանի թանգարանը հիմնադրվել է 1953 թվականի ապրիլի 5-ին՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծի մահվան 30-րդ տարելիցին: Ցուցադրությունում կա լուսանկար՝ Ավ. Իսահակյանը կտրում է թանգարանի մուտքի ժապավենը: Լուսանկարի տակ Օ. Թումանյանի մակագրությունն է. «Ապրիլի 5-ին թանգարանի բացումն էր: Ավոն ժապավենը կտրեց: Ինչքան մարդ ու երեխա է գալիս...»:

Թանգարանի հիմնադիրը և առաջին տնօրենը բանաստեղծի դուստր Աշխենն է: Թամարը մասնագիտությամբ ճարտարապետ էր. 1966-ից մինչև իր մահը՝ 1989 թվականը տնօրինել է Հովհաննես Թումանյանի թանգարանը: Սրահի մի անկյունում ներկայացված է Օլգայի ննջասենյակը՝ նրա անձնական իրերով. կարի մեքենա, գրքեր, սեղանը, լամպը, հագուստը, սիրած շաքարամաններ և այլ պարագաներ: Գրքերի հիմնական մասը նվերներ են ճանաչված գրողներից, նկարիչներից, այլ երևելիներից՝ Մարտիրոս Սարյան, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին, Ստեփան Զորյան, Վաղարշակ Նորենց... Ցուցադրված են նաև բացիկներ, որոնք Մեծ մայրն ստացել է հարազատ-բարեկամներից, թոռներից: Մ. Սարյանի բացիկներից մեկի վրա գրված է. «Տիկնանց տիկին Օլգա Թումանյանին՝ Մեծն Թումանյանի ուղեկցողուհուն. շնորհավորում ենք հանդերձ ընտանյոք 95-ամյակը: Ցանկանում ենք առողջություն, առողջություն և առողջություն: Սիրով և հարգանքով՝ Մարտիրոս Սարյան: 1966թ. դեկտեմբերի 22. Երևան»:

Ցուցադրությունում ներկայացված են նաև լուսանկարներ Թումանյանների ընտանեկան պատմությունից, դուստրերի արդեն երիտասարդ տարիներից, այլ դեպքերի մասին: Հետաքրքիր է լուսանկարների փոքրիկ ալբոմը, որը պատկանել է Մեծ մայրիկին: Օլգա Թումանյանը մահացել է 100 տարեկանում՝ 1971 թվականին, Երևանում: Թաղված է Երևանի քաղաքային պանթեոնում: Օլգա Թումանյանի թոռնուհու՝ Իրմա Սաֆրազբեկյանի հեղինակությամբ լույս է տեսել «Օլգա Թումանյանը» գիրքը: Թանգարանի գլխավոր ֆոնդապահ Մարինե Բաղդասարյանը տեղեկացրեց, որ բոլոր այցելուները տպավորված են հեռանում ցուցադրությունից:

Հ. Գ. Հովհաննես թումանյանի թանգարանը (ճարտարապետ՝ Գրիգոր Աղաբաբյան) գտնվում է բարձունքի վրա, Երևանի կենտրոնում՝ Մոսկովյան 40 հասցեում, և թանգարան հասնելու համար հարկավոր է հաղթահարել 54 աստիճան, որը մեծ բանաստեղծի ապրած կյանքի տարիները խորհրդանշող թիվն է:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԱՍՄՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ

ԱՐՑԱԽ, ԻՄ ԴՐԱԽՏ

«Եթե մեր զինվորը զենքը ձեռքին հանգիստ, առանց պայքարելու հանձնվում է թշնամուն, ուրեմն մենք ինչ-որ տեղ սխալվել ենք ու անելիքներ ունենք: Իսկ եթե ամբողջ ստորաբաժանումն է զենքը ցած դնում ու ինքնակամ հանձնվում, ապա մենք առավել ևս շատ անելիքներ ունենք: Հայ զինվորը երբեք իր հպարտության պատվանդանից չպետք է իջնի ու ծնկի գա ոսոխի առջև: Նրան փոքրուց պիտի սնուցել մեր պատմության հերոսական էջերով, ազգային գաղափարներով ու անձնականը հայրենիքին ստորադասելու աննկուն կամքով: Այսօրվա միջոցառումը հենց այդ նպատակն է հետապնդում. նպաստել աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը, ազգային ինքնագիտակցության ու արժանապատվության ամրապնդմանը, երիտասարդ սերնդի ուշադրությունը բևեռել հայ անաղարտ գրականությանն ու պոեզիային, վեր հանել ասմունքի հարուստ ավանդույթները, ի հայտ բերել շնորհալի երեխաներին ու աջակցել նրանց: Հաջողություն եմ մաղթում բոլոր մասնակիցներիդ՝ վստահ ու համոզված, որ միջոցառման անկաշառ ու արդարադատ հանձնախումբը կբացահայտի շնորհալի երեխաներին»,- այս խոսքերով է միջոցառումը բացում Ասկերանի շրջանի կրթության բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը ու ողջ մրցույթի ընթացքում հետևում մասնակիցների ելույթներին:

Երազումս տեսա գյուղս ավերված,
Սրտի կարոտով հասա օջախիս,
Վառված էր, այրված՝ մոխիր ամեն ինչ,
Մոխրացած էին, ա՜խ, քարերն էլ պատի…
……
Բայց թոնիրը մեր կանգուն էր՝ տեսա,
Մեր թոնրատունն էր ինձ աչքով անում,-
Թոնիրը վառեմ, թարմ հացի բույրով,
Կանչեմ բոլորին ու հաց բաժանեմ…

Լսվում է տասնամյա Կարոլինա Սարգսյանի՝ ականջահաճո ձայնը, որով նա կոչ էր անում հայորդիներին՝ կրկին կառուցել, կառուցել երգով ու ի հեճուկս բախտի՝ այդպես հաղթել մահին չարաղետ:

Մասնակիցները հանդես են գալիս տարիքային երկու խմբերով՝ 9-12 և 13-16 տարեկան: Իրար էին հաջորդում մեր դասական հանճարների՝ Պ. Սևակի, Հովի. Թումանյանի, Հ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի, Վ. Տերյանի, Գ. Էմինի, Հովի. Շիրազի, Մ. Մարգարյանի, Հովի. Գրիգորյանի, Վ. Օվյանի՝ բոլոր ժամանակների համար արդիական ստեղծագործությունները, որոնց արտահայտած գաղափարները հավերժական են ու բոլոր սերունդների համար ոգևորության և հայրենասիրական դաստիարակության աղբյուր: Այդ գործերը մեզ տանում են հայ ժողովրդի պատմության վայրիվերո ճամփաներով, պատմություն, որ լի է և՛ հերոսական մաքառումների, և՛ աղետալի էջերով: Այդ էջերը մեզ հիշեցնում են, որ հայ ժողովուրդը միշտ էլ ծանր ժամանակներ է ունեցել, բայց այդ ծանր իրավիճակը կարողացել է հաղթահարել միայն այն դեպքում, երբ համախմբված ու միաբան է եղել, երբ ունեցել է ազգային մտածողություն: Բաբելոնն ու Ասորիքն են եղել մեր թշնամին, բայց պատմության ասպարեզից չքացել են չար մշուշի պես, դաշտ է հիմա նրանց տեղը, ու չկա քար քարի վրա: Երեխաների խոսքում հայրենի հողում ամրանալու ու հարատևելու, արարելու ու շենացնելու կամքի արտահայտություն կա: Զգացվում է, որ նրանք այսօրվա ծանր իրավիճակից չեն սրտնեղում, ընդհակառակը, անընդհատ մաքառումների, լավատեսությամբ ողողված մտքեր են արտահայտում: Ընկճվածություն բոլորովին չկա, կա միայն վստահություն ու ապագայի հանդեպ անսասան հավատ և հույս: Ավելին, կա նախատինք, կա կշտամբանք հայրենիքը լքողների հանդեպ, որը հնչում է 14-ամյա Նարեկ Բաբայանի (Նորագյուղի մ/դ) շուրթերով, հայոց հանճարի՝ Հովի. Շիրազի իմաստուն խոսքերով.

Ո՞ւր եք շտապում, ո՛վ խաբված ջրեր,
Մեզ ծարավ թողած՝ ո՞ւր եք շտապում,
Սևանն է քաշում ծով կարոտը ձեր.
Դուք ո՞ւր եք օտար ծովերը թափվում:
Անուշ է թվում ձեզ կանչող հեռուն,
Բայց դուք կկորչեք ծովերում օտար,
Դարձեք՝ ծովանա թող հայոց առուն,
Մի՞թե մոր գիրկը նեղ է
ձեզ համար…

9-ամյա Վահե Վերդյանի (Շուշի մ/դ) կարծիքով՝ Արցախը մի դրախտ է, որտեղից հեռանալ հնարավոր չէ, ընդհակառակը, պետք է ամուր կապվել այդ հողին ու անսասան պահել նրա սահմանները (խոսքերի հեղինակը, իմիջիայլոց, նրա հայրն է՝ Գրիգորի Վերդյանը):

Աստղաշենի միջնակարգ դպրոցի աշակերտ, 9 տարեկան սևակն Գոռ Վարդանյանը խրոխտ ձայնով կոչ է անում բանաստեղծ Կառլո Օհանյանի տողերով բոլոր նրանց, ում համար Արցախը, Հայաստանը կդառնան լոկ մի հուշ.

Կանգ առ, քարավան, գոնե ետ նայիր,
Հայոց սուրբ հողը անտեր մի՛ թողնիր,
Կանգ առ, կառուցող, շինարար, բժիշկ,
Կանգ առ, մանկավարժ, վարպետ, խոհարար,
Ետ նայեք, ինչպե՜ս են վանքերը լալիս,
Ո՜նց են աղերսում դռներ փակելիս…
……
Քարավան, ո՞ւր ես տանում քո բալին,
Քո ձեռքով տալիս, հանձնում օտարին.
Ո՞ւր եք թողնում հողն այս դրախտ…

Փոքրիկը կոչ է անում կառուցել, պահել երկիրը, ոսոխի դեմ դուռ չբացել. բավական է՝ ինչքան օտարին են ծառայել: Վերջում էլ խնդրում է դահլիճին ու հանձնախմբին՝ թույլ տալ արտասանելու երկրորդ բանաստեղծությունը, որն ընտրել է «Լուսայգ»-ի էջերից.

Ես հպարտ եմ, որ հայ եմ,
Իմ քաջ ազգի զավակն եմ,
Հայրենասեր Հայկից սերված
Արցախցի եմ, մանուկ սևաչ:
Հայ ծնվել եմ, հայ կմնամ,
Օտար հողում ես չեմ մնա,
Իմ մայր լեզուն չեմ մոռանա,
Արցախից ես չեմ հեռանա: *(Գոռ Նազարյան)*

Ասմունքի մրցույթի խորագրին՝ «Մենք կանգուն ենք մեր լեռների պես», հարազատ են մնացել մեր մանկավարժները՝ ընտրելով խորագրին հատուկ ստեղծագործություններ:

Հանդիսատեսին մեծ բավականություն պատճառեցին նաև Հերմինե Մարգարյանի, Արևիկ Արզումանյանի, Աննա Պողոսյանի (տարիքային 1-ին խումբ), Նելա Պետրոսյանի, Լիա Ավանեսյանի, Անիտա Հակոբյանի, Էլիզաբեթ Դանիելյանի (տարիքային 2-րդ խումբ) ելույթները: Բոլոր դպրոցները չէ, որ երեխաներին լավ էին նախապատրաստել: Մեր ուսուցիչները պետք է լավ հասկանան, որ ասմունքելը յուրահատուկ արվեստ է, պետք է հարազատ մնալ նրա պահանջներին: Այս ուղղությամբ նրանք անելիքներ շատ ունեն՝ չնայած այն հանգամանքին, որ այսօր ավելի է դժվարացել նրանց աշխատանքը, մանավանդ՝ ծանր պատերազմից հետո:

Ուրախալի էր այն փաստը, որ մրցույթին շատ տղաներ էին մասնակցում (առաջ քիչ էին): Անհրաժեշտ է նրանց հետ փոքրուց աշխատել: Եթե նրանց մեջ ուսուցիչը ինչ-որ կայծ է նկատում, ապա չպետք է աչքաթող անի, այլ փորձի զարգացնել, մշակել այդ կարողությունները: Իսկական մանկավարժի առաքելությունը դրա մեջ է:

Այս սերունդը, որը գերադասել է ապրել Արցախում, հերոս է իսկական: Պետք է այդ հերոսական ոգին պահպանել, գիտակցել տալ, որ հայրենիքի պաշտպանությունը սուրբ գործ է, ու այդ սրբությունը պետք է վեր դասել ամեն ինչից: Հասկացնել, որ օտար ափերը նրանց երջանկություն չեն խոստանալու, ապրել միմիայն այս հողի վրա ու խոր արմատներ ձգել. սա՛ է մեր հավերժության գաղտնիքը: Մեծն Շիրազը շատ տպավորիչ է ներկայացնում «չվողներին» իր «Նոյի ագռավներին» հանճարեղ բանաստեղծության մեջ.

Ինչո՞ւ Կանադա, ի՞նչ Ամերիկա,
Երբ թեկուզ մի բուռ Հայաստանը կա,
Տուն աղավնացեք, նոյի ագռավներ,
Կկորչեք, որպես գայլախեղդ գառներ…

Հանձնախումբը, վերջում ի մի բերելով արդյունքները, երկու տարիքային խմբերից ընտրեց 5-ական մասնակիցների՝ հանրապետական փուլին ներկայացնելու համար: 1-ին խումբ՝ Սարգսյան Կարոլինա (Ասկերանի մ/դ), Մարգարյան Հերմինե (Այգեստանի մ/դ), Վարդանյան Գոռ (Աստղաշենի մ/դ), Արզումանյան Արևիկ (Պատարայի մ/դ), Պողոսյան Աննա (Խանցքի հ/դ): 2-րդ խումբ՝ Պետրոսյան Նելա (Այգեստանի մ/դ), Ավանեսյան Լիա (Աստղաշենի մ/դ), Հակոբյան Անիտա (Պատարայի մ/դ), Դանիելյան Էլիզաբեթ (Ասկերանի ՄՊՍԿ), Բաբայան Նարեկ (Նորագյուղի մ/դ):

Միջոցառումն անցավ ջերմ ու հաճելի մթնոլորտում: Ամեն անգամ այսպիսի միջոցառումներով ավելի ենք արժևորում մեր գրականության մեծերին ու գնահատում նրանց թողած հարուստ ժառանգությունը, որ հավերժ ուղեկցելու է մեր սերունդներին:

Շնորհավորենք շրջանային փուլի հաղթողներին և հաջողություն մաղթենք նրանց հանրապետական փուլում:

Սուրայա ՂԱՋԱՐՅԱՆ

Օլիմպիադա-2022

ԼԱՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՊԱՍՈՒՄՈՎ

Հունվարի 19-ից ընթանում է դպրոցականների առարկայական օլիմպիադայի 3-րդ՝ մարզային (ԱՀ հանրապետական) փուլը: ԱՀ ԿԳՄՍՆ կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանի տեղեկատվությամբ՝ Արցախի դպրոցականները մասնակցում են 15 առարկայից, բացի աստղագիտությունից:

Շրջանային փուլին մասնակցած 1392 աշակերտից հանրապետական փուլին երաշխավորվել է 363-ը, աշակերտների մի մասը հայտագրվել է մեկից ավելի առարկաներից: Ըստ շրջանների՝ պատկերը հետևյալն է. Ստեփանակերտ քաղաքի դպրոցներից երաշխավորվել է 167 աշակերտ, Ասկերանի շրջանից՝ 56, Մարտակերտի շրջանից՝ 57, Մարտունու շրջանից՝ 56, Հադրութի շրջանից (Մ. Մանվելյանի անվան դպրոց)՝ 14, Շուշիի շրջանից (Խ. Աբովյանի անվան դպրոց)՝ 10, Քաշաթաղի շրջանից (Աղավնոյի դպրոց)՝ 3: Արդեն անցկացվել է մաթեմատիկա, կենսաբանություն, ֆիզիկա առարկաների օլիմպիադան:

Մաթեմատիկա առարկայից մասնակցել է 5-12-րդ դասարանների 86 աշակերտ, կենսաբանությունից՝ 25, ֆիզիկայից՝ 3 հոգի:

Մաթեմատիկայից ամենաշատը մասնակցել են 5-ր դասարանից՝ 33 աշակերտ, 6-րդ՝ 15, 7-րդ՝ 20, 8-րդ՝ 5, 9-րդ՝ 7, 10-րդ՝ 2, 11՝ 2, 12-րդ՝ 6 աշակերտներ:

Կենսաբանության օլիմպիադային մասնակցած 25 աշակերտից 6-ը Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցից են, 1-ական՝ Չափարի միջնակարգ և Մարտակերտի հ. 2 հիմնական դպրոցներից են:

Մարտունու շրջանից ևս մասնակցել է 8 դպրոցական, որից 4-ը՝ Ճարտարի հ.1 միջնակարգ/հոսքային, 2-ը՝ Մարտունու միջնակարգ/հոսքային, 1-ական՝ Ճարտարի հ.2 հիմնական և Սոսի միջնակարգ դպրոցներից:

Քիմիայի օլիմպիադային մասնակցել է 1 աշակերտ Վաղուհասի միջնակարգ դպրոցից:

Սեփ. լրատվություն

ԳՐԱԿԱՆ ԷՋ

БРОШЕННЫЙ МЯЧ

Рассказ



Под незатейливым пластиковым стулом в детской комнате сиротливо лежал баскетбольный мяч. Уже больше месяца он покоился там абсолютно неподвижно, словно и не вертелся каждый день в умелых мальчишеских руках. Нет, мальчик не мог просто так бросить его, ведь мяч всегда старался быть послушным и не подвести хозяина ни во время дриблинга и передач, ни когда тот пытался делать финты, позволяющие перехитрить соперника и прорваться к его кольцу. А попав в корзину после меткого броска, он ликовал вместе с хозяином. И тот наверняка догадывался об этом, ибо мальчишки - народ весьма прозорливый и чувствительный...

Но сейчас мяч уныло лежал под стулом в детской комнате на пятом этаже, и это, конечно же, было неестественно для него. Однако всё объяснялось ужасно просто: больше месяца мальчик вместе со своей мамой не выходил из сырого подвала, служившего (как мог) жителям большого дома бомбоубежищем...

Вместо привычных трелей птиц и мирной зари утро последнего воскресенья первого месяца осени принесло жителям Степанакерта оглушительные разрывы снарядов и бомб. В первый момент показалось, что это продолжение красочного фейерверка, данного накануне по случаю празднования Дня города. Но реальность оказалась жестокой, куда страшнее, чем самый кошмарный сон...

Теперь для горожан стали привычными (впрочем, к такому вряд ли можно привыкнуть) ракетные и артиллерийские обстрелы. Они велись круглосуточно: утром, днём, вечером и ночью. Мальчик, как школьный урок, уже хорошо знал, что такое "Смерч", "Полонез", "Ураган". Несущее смерть и разрушения ракетное оружие, порой цинично, словно в издёвку над людьми, прикрывалось ласковым именем - к примеру, LORA. Так, кстати, звали и одноклассницу мальчика, и он никак не мог соотнести в своей детской голове эту симпатичную, скромненькую и тихую девчонку со страшным оружием, которое с бешеным шумом крушило всё вокруг...

А беспилотник уже не казался мальчику безобидным, появляющимся по праздникам в солнечном небе самолётиком, а был зловещей хищной птицей. Когда над домом летал дрон, то это означало, что через час-другой будет ракетный удар... Взрослые, на веку которых это была уже третья война, утверждали, что нынешняя отличается от предыдущих особой жестокостью.

"Это не прежняя автоматная война, - с видом знатока утверждал плешивый дед в толстых очках на большом горбатом носу. - Сейчас всё воздух решает. Если небо у тебя не защищено, тогда пиши пропало..."

Высокий мужчина с запущенной бородой, окаймлявшей нездоровое одутловатое лицо, уверял, что сегодня тыла и передовой нет, они слились, потому что применяется современное вседостающее оружие...

"Ещё вопрос: где безопаснее - там или здесь?" - с обидой на кого-то говорил он.

Много чего нового и необычного услышал и узнал в подвале от взрослых мальчик. Его искренне позабавило словосочетание "пёс войны". Оказалось, что так именуют наёмников, которых враг призвал из разных стран под свои боевые знамёна. Их называли также "международными террористами", и это сочетание слов сильно удивило мальчика. Своим детским умом (хотя мальчик теперь стал немного ещё и политиком) он не был в состоянии уразуметь, как бандиту можно присвоить международный "статус", а простым нормальным людям - нет, из-за чего они должны прятаться по подвалам, чтобы не погибнуть от страшных бомб и снарядов...

Не понял мальчик и значения слова "беспредел", однако спросить у старших, а тем более у мамы, постеснялся, подумав, что это неприличное, "взрослое" выражение. Здесь, в подвале, особенно в момент обстрела или непосредственно после него, взрослые (главным образом пожилые люди, не мобилизованные на фронт), не сдерживали эмоций и порой ругались при женщинах и детях, произносили "плохие" слова, наверное, сами того не замечая. И мальчик не хотел показаться смешным, задав глупый вопрос...

Дни в подвале, больше напоминавшем приют для обездоленных, проходили смертельно однообразно, как в прямом, так и переносном смысле. Люди с нетерпением ждали, что кто-нибудь, некая сила, остановит это смертоубийство. Но прошло сначала десять, потом - двадцать, тридцать дней, а войну (как выяснилось - тот самый "беспредел") никто не останавливал...

В момент обстрела, когда здание дрожало, звенело, трещало и, казалось, кричало, мама молча стискивала мальчика в своих объятиях, не то защищая его, не то, наоборот, ища в нём спасение. В таком застывшем положении они оставались ещё минуту-другую по завершении обстрела, то ли не веря, что пронесло и на этот раз, то ли ожидая нового удара...

Как и четыре года назад, отец мальчика в первый же день войны поспешил добровольцем на фронт. Тогда войну быстро остановили, на четвёртый день. Отец скоро вернулся домой и был в глазах маленького сына бесстрашным героем, защитившим его и маму от сказочного чудовища. Сейчас отец был далеко, а им приходилось спасаться в подземелье и надеяться на счастливый случай. Но чем мог сегодня помочь отец, даже будь он рядом, если война "не автоматная", а фронт и тыл стали одним целым... Вот такими недетскими вопросами задавался мальчик.

За неполные полтора месяца нескончаемой войны мальчик, казалось, вырос сразу на несколько лет, но от этого его привязанность к мячу, брошенному им помимо своей воли, нисколько не ослабла. Мальчик сильно скучал по нему, вспоминая радость и счастливые мгновения, которые подарил ему любимый спортивный снаряд.

Ещё совсем недавно (но, казалось,

очень давно, в какой-то другой жизни) после занятий в школе мальчик каждый день спешил на тренировки. Он очень умело обращался с мячом, метко забрасывал его в корзину, но не жадничал и в нужный момент отдавал пас товарищам по игре. В общем, приносил команде много всякой пользы, и тренеры перевели его в подростковую секцию - команду мальчиков, старше него года на два. Тренеры пророчили ему блестящую карьеру, и первые серьёзные соревнования подтвердили их ожидания.

Мальчик и его команда выиграли все пять матчей в своей группе, одолев соперников уверенно, с большой разницей в счёте. Мальчик заработал немало очков, ему даже удалось несколько раз забросить "круглого" в заветную корзину из-за трёхочковой линии. Ребята находились в шаге от чемпионского пьедестала и летали в предвкушении счастья от окончательного успеха. Но в финале произошло неожиданное...

Центровым противника оказался темнокожий юноша под два метра. Он был выше самих тренеров и судей, и поначалу (пока не снял спортивную куртку) казался одним из них. Ему было... четырнадцать лет, и соответствующие документы на это, наверняка, были. Но в команде соперника все были уверены, что против них выставили "липу". Длиннющие руки центрового легко блокировали все броски мальчика и его товарищей. Не получались и финты: необычного противника невозможно было застать врасплох. А в один момент великан грубо сфолил на мальчике, после чего тому пришлось сесть на скамейку запасных с травмой ноги. Мальчик не стал скрывать своих слёз, но не от физической боли, а от горькой обиды...

Соперник одержал победу, которая, судя по всему, была очень нужна кому-то из взрослых. Чувство унижения и несправедливости не проходило у мальчика долго. Теперь же, находясь в подвале и невольно слушая и анализируя разговоры старших, он пришёл к пониманию того, как бывает плохо, когда взрослые бесцеремонно вторгаются в мир детей и навязывают им свои "игры"...

С воздуха на город продолжали падать бомбы, а не оранжевые баскетбольные мячи, весело отскакивающие во время тренировок от щита. Одна из бомб попала в здание школы, где мальчик днём учился, а вечером ходил заниматься в баскетбольную секцию...

Лишь на 44-й день, когда в городе почти не осталось ни одного целого здания, в зоне военного конфликта появились миротворцы. Обстрелы и бомбёжки прекратились как по мановению волшебной палочки, но зловещий вой сирены, заставляющий передёрнуться и готовиться к худшему, ещё долго стоял в ушах людей...

Наутро мальчик вышел из подвала и осторожно, старательно обходя горки осколков побитого стекла на лестничных площадках, поднялся на пятый этаж. Пройдя в свою комнату, он извлёк из-под заваленного кусками отбитой штукатурки искалеченного стула свой любимый мяч, внимательно осмотрел со всех сторон - цел ли он, и по привычке проверил его на упругость, сдавив тонкими, но сильными пальцами. Мяч выжил, остался цел и невредим, более того, был полон жизненной силы - воздуха.

Мальчик прижал мяч к груди и почувствовал прилив необъяснимой тёплой энергии. Она побежала от кончиков пальцев и, разливаясь по всему телу, пробуждала в душе былые нехитрые радости мальчишеской жизни...

Ашот БЕГЛАРЯН
2020г.

ԿՈՐԵԼ Է

Արարատ Տիգրանի Ծատրյանի ԱԱ 219432 համարի ատեստատը՝ տրված «Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 2019-2020 ուստարում:

Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 25.01.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: